Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
մայիսի 16-ի N 650-Լ որոշման

# Ց Ա Ն Կ

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN | Նպատակ | Միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Համակատարող | Ժամկետ | Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | | | |
| 1 | Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունների/ գերակայությունների սահմանում, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացում | 1.1 «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Հաստատված ռազմավարության առկայություն, որտեղ կամրագրվեն առաջիկա 5 տարիների սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման հիմնական գերակայությունները/ առաջնահերթությունները, նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև զարգացման խոչընդոտները և հիմնական ռիսկերը: | | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 2 | Տարեց մարդկանց համար բարենպաստ և առողջ միջավայրի ստեղծում, արժանավայել, առողջ և ակտիվ կենսակերպի գործընթացի ապահովում, խնամքի ապաինստիտուցիոնալացում | 2.1 «Տարեցների խնամքի ապաինստիտուցիոնալացման և այլընտրանքային համայնքային ծառայությունների զարգացման հայեցակարգը և դրա իրականացումն ապահովելու միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ | 1. Խնամքի ապաինստիտուցիոնալացման գործընթացի իրավական կարգավորման առկայություն (հաստատված հայեցակարգ), որը կապահովի.<br>• Յուրաքանչյուր տարի, շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատությունների կարողությունների և շահառուների կարիքների անհատական գնահատման հիման վրա շահառուների 5%-ը կվերադառնա | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2020թ. մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացում | ընտանիք, առնվազն 10%-ը կօգտվի համայնքային այլընտրանքային ծառայություններից: Ակնկալվում է, որ յուրաքանչյուր տարի առնվազն 3 համայնքում կներդրվեն համայնքային ծառայություններ և արդյունքում այլընտրանքային տարբեր ծառայություններ կստանա 70-80 տարեց:<br>• Կներդրվեն ծառայությունների ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ (պետություն-համայնք-մասնավոր-հասարակական կազմակերպություն-շահառու և այլ ձևաչափերով համագործակցության շրջանակներում):<br>• Ծառայությունները հասարակական կազմակերպությունների կողմից կտրամադրվեն բացառապես մրցակցային սկզբունքով:<br>• Նախատեսվում է հանրապետության առնվազն 10 համայնքի տեղական սոցիալական ծրագրերում ներառել տարեցներին մատուցվող համայնքային ծառայությունների համաֆինանսավորման վերաբերյալ դրույթ:<br>• Համայնքներում կներդրվեն նշված այլընտրանքային ծառայություններից առնվազն 3-ը: | | | |
| 3 | Նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները | 3.1 Յուրաքանչյուր տարի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման համապատասխան հնարավորության առկայության պարագայում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի | Նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացում, որը կնպաստի՝<br>• աղքատության կրճատմանը,<br>• նվազագույն և միջին աշխատավարձերի միջև հարաբերակցության նվազմանը,<br>• բնակչության | | 2019-2023թթ. յուրաքանչյուր տարի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | կենսամակարդակի բարձրացմանը: | | | |
| 4 | Արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման նպատակով աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հստակեցում և բարելավում, ինչպես նաև համապատասխանեցում միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին | 4.1 Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Խնդիրների և ուղղությունների մատնանշում, որոնց լուծումներին միտված համապատասխան առաջարկությունների ներկայացման պարագայում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը կհամապատասխանեցվի ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև կհստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթները | | 2020թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 4.2 Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների համապատասխանության վերլուծության, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերհանման արդյունքում, ինչպես նաև որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | 1. Աշխատանքային օրենսդրության, մասնավորապես.<br>• սոցիալական գործընկերությանը,<br>• կոլեկտիվ պայմանագրերին,<br>• արհմիությունների դերին,<br>• աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելմանը,<br>• հարկադիր աշխատանքին,<br>• գործադուլին,<br>• ամենամյա արձակուրդներին, վերաբերող,<br>ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին,<br><br>2. Իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների կարգավորում, այդ թվում՝ որոշակի | | 2021թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանում*: | | | |
| | | 4.3 Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործման և ամբողջականացման համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում ու Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործում և ամբողջականացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2022թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 5 | Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ գործող վերահսկողական համակարգի կատարելագործում | 5.1. Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ գործող վերահսկողական համակարգի կատարելագործման նպատակով համապատասխան աշխատանքների ճանապարհային քարտեզի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողական համակարգ ունենալուն ուղղված աշխատանքների ուղղությունների և հաջորդական քայլերի սահմանում | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | 2020թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 5.2. Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ գործող վերահսկողական համակարգի կատարելագործման նպատա-կով համապատասխան իրավական ակտերի նախագծե-րի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ բարելավված և արդյունավետ վերահսկողության համակարգի առկայություն, ինչն անուղղակիորեն կնպաստի նաև աշխատողների իրավունքների խախտման դեպքերի նվազմանը | | 2021թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 6 | Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացում, մատուցվող | 6.1 ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված նոր ծրագրային ուղղությունների սահմանում | | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ծառայությունների ընդլայնում, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների կարգավորում | 6.2 Զբաղվածության էլեկտրոնային հարթակի ներդրում | Զբաղվածության ոլորտի ծառայությունների մատուցման որակի բարձրացում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 6.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացում, աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված նոր ծրագրերի ներդրում, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանում, գործազրկության մակարդակի նվազում | | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 7 | Ազգային օրենսդրության համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին | 7.1 «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովման իրավական պահանջների սահմանում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց իրավունքների ապահովում՝ բացառելով հաշմանդամության հիմքով խտրականությունը: | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, | 2020թ. մարտի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 8 | Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման սոցիալական մոդելի առկայություն, գնահատված կարիքին համարժեք վերականգնողական ծառայությունների մատուցում | 8.1 Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի ներդրում | Իրավական հենքի առկայություն, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման համակարգի բարեփոխումների ծրագիր, մասնագետների ռեեստրի առկայություն, վերապատրաստված մասնագետներ, հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի փորձնական գործարկում, էլեկտրոնային համակարգի գործարկում, հաշմանդամություն ունեցող անձի գնահատված կարիքին համարժեք ծառայությունների փաթեթի մշակում, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման կենտրոնների ստեղծում: | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2020թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 9 | Հանրային կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ապահովում | 9.1.«Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցա-ռումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Ռազմավարության դրույթների իրացումը կնպաստի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային խտրականության հաղթահարմանը և կանանց հավասար մասնակցության ապահովմանը կառավարման և որոշումների կայացման ոլորտում, տնտեսության ոլորտում կանանց հնարավորությունների ընդլայնմանը՝ կանանց ձեռներեցությունը խթանող ծրագրերի իրականացման միջոցով, կրթական և առողջապահական ծրագրերի հավասար մատչելիությանը, կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի հզորացմանը: | ՀՀ շահագրգիռ գերատեսչություննե ր և մարմիններ<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2019թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ընտանիքում բռնության երևույթի կանխարգելում | 10.1 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ստեղծում, ընտանիքում բռնության դեպքերի հաշվառ-ման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդ-ման համակարգի և աջակցու-թյան տրամադրման մեխանիզմ-ների ներդրում ինչպես նաև խնդրով զբաղվող տարբեր մարմինների և կառույցների միջև գործընկերային հարաբե-րությունների ամրապնդում | Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների ընդլայնված համակարգ, հստակեցված աջակցության ընթացակարգերը, վերապատրաստված մասնագետներ, ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդման մշակված մեխանիզմ, ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման ներդրված համակարգ: | ՀՀ շահագրգիռ գերատեսչություններ և մարմիններ<br><br>Հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ)<br><br>Միջազգային կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ. |
| 11 | ԵԽ-ի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի վավերացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն | 11.1 ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործում և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայով ստանձնած հանձնառություններին համապատասխանեցում | Երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանեցված ոլորտի քաղաքականություն | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2019թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորո ւմ չի պահանջում |
| 12 | Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելում, թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության և պաշտպանության քաղաքականության մշակում՝ փոփոխվող իրավիճակին և ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ | 12.1 Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման Ազգային ծրագրի միջոցառումների իրականացում | Երեխաների ուղղորդման մշակված ընթացակարգ, ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների միջև ամրապնդված համագործակցային կապեր, երեխայի առանձնահատուկ կարիքներից բխող մոտեցումների կիրառություն և հատուկ կատեգորիայի զոհերի աջակցության կատարելագործված մեխանիզմները, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի հայտնաբերման և նախանույնացման, աջակցության բարելավված գործընթացը:<br><br>Բնակչության իրազեկվածություն թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ: | Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի Խորհրդում ներկայացված պետական կառավարման մարմիններ, Հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) ,<br>Միջազգային կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2019-2021թթ. շարունակակ ան | ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Երեխայի սեռական անձեռնմխելիության ապահովումը՝ երեխայի իրավունքների պաշտպանության համատեքստում | 13.1 «Սեռական շահագործումից և սեռական բնույթի չարաշահումներից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի վավերացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն | Ներդաշնակեցված ազգային և միջազգային օրենսդրությունները, երեխայի լավագույն շահի առաջնահերթության ամրապնդված սկզբունքը, աջակցության և պաշտպանության մշակված ընթացակարգեր Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ: | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2019-2020թթ. | Ֆինանսավորում չի պահանջում |
| 14 | Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում | 14.1 Երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, այլընտրանքային ծառայությունների ընդլայնում | Երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ցերեկային ժամերին այլընտրանքային ծառայությունների թվի ընդլայնում, խնամատար ընտանիքների թվի ավելացում, համապատասխան իրավական ակտերի նախագծեր: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2020թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 15 | Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բարելավում | 15.1 Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի գործառույթների վերանայում | Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական դաշտի բարելավումը՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, և ՀՀ միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարման պահանջներին համապատասխան:<br>Երեխաների իրավունքների պաշտպանության Ազգային հանձնաժողովի, խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության գնահատման զեկույց:<br>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի տեղեկատվական համակարգի արդիականացում:<br>Երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2020թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | իրավական ակտերի նախագծեր:: | | | |
| 16 | Քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում | 16.1 «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Օրենքի նախագծի ընդունումով ձևավորվելու է անապահով ընտանիքների կարողությունների զարգացման՝ նրանց ինքնաբավ դարձնելուն ուղղված և արժանապատիվ ու սեփական վաստակ ունեցող ընտանիք ձևավորելու, այդ ընտանքների պետական աջակցությունից՝ երկարատև կախվածությունից ձերբազատվելու իրավական հենքը, ինչպես նաև կապահովվի աստիճանական և սահուն անցում նպաստների անկանխիկ վճարմանը՝ մինչև 2023թ. տարեվերջ: | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 16.2 «ՀՀ կառավարության 30.01.2014թ. N145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման և վճարման հստակեցված ընթացակարգ, նոր մոտեցումներ, որոնց կիրառմամբ բարելավվելու են ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության տրամադրման արդյունավետությունը և հասցեականությունը: | | 2020թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 16.3 Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի գործարկում՝ ընտանիքի գնահատված սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ապահովում | 1) «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի առկայություն<br><br>2) Ընտանիքների անապահովության գնահատման և նպաստների համակարգեր, այդ թվում՝ թիրախային մեխանիզմներով հայտնաբերված ծայրահեղ աղքատ ընտանիքների սոցիալական աջակցության ծառայություններ՝ համակարգված և փոխկապված սոցիալական պաշտպանության այլ կարևոր միջամտությունների, հատկապես | | 1) 2020թ. փետրվարի 1-ին տասնօրյակ<br><br>2) 2020թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ<br><br>ա.2019-2020թթ. | 1)-4) Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության, ինչպես նաև սոցիալական խնամքի և աջակցության ծառայությունների հետ<br><br>բնակչության 14%-ից ոչ ավել ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվ<br><br>3) ընտանիքների սոցիալական խոցելիության, աղքատության, սոցիալական զրկանքների և բացառումների գնահատման մեթոդաբանության փոփոխություններ՝ տնային տնտեսությունների կենսապայ-մանների, այդ թվում՝ ՀՀ վիճակագրա-կան կոմիտեի կողմից իրականացվող ամենամյա հետազո-տությունների տվյալների ուսումնասիրության միջոցով հասցեական ծրագրերի թիրախավոր-ման բանաձևում օգտագործվող աղքատության և զրկանքների բնութագրիչների վերանայված կշիռներ, կիրառվող լրացուցիչ այլ ցուցանիշներ<br><br>4) ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական մշակված ենթահամակարգը<br><br>5) ամբողջությամբ վերազինված սոցիալական աջակցության տարածքային մարմնի համակարգչային պարկ<br><br>6) սոցիալական դեպքի վարման մեկ միավորի կազմակերպական ծախսերի հստակեցված արժեք, սոցիալական աշխատողի կողմից արագ և արդյունա-վետ արձագանք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) սոցիալական կարիքներին՝ համագործակցելով սոցիալական | | յուրաքանչյուր տարի հուլիսի 2-րդ տասնօրյակ<br><br>3)2021-2023թթ. յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>4) 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>5) 2020թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>6) 2021թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | 5) ՀՀ պետական բյուջե<br><br>6), 7) ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ծառայություններ տրամադրող կազմակերպությունների (անկախ կազմակերպական իրավական կարգավիճակից) հետ<br><br>7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող շահառուին սոցիալական դեպքի վարման միջոցով տրամադրվող սոցիալական ծառայությունների փաթեթի դրամական արժեքի առկայություն<br><br>8) սոցիալական պաշտպանության ոլորտում պատվիրակման ենթակա ծրագրերի սահմանված չափորոշիչներ<br><br>9) մրցութային հիմունքով կնքված սոցիալական ծառայությունների պատվիրակման պայմանագրեր | | 7) 2021թ. մարտի 3-րդ տասնօրյակ<br><br>8) 2021թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ<br><br>9) 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | 8) ՀՀ պետական բյուջե՝ 157,000.0 հազ. դրամ<br><br>9)ՀՀ պետական բյուջե |
| | | 16.4. Սոցիալական պաշտպանության համակարգի՝ արտակարգ անհետաձգելի իրավիճակների, աղետների և ցնցումների արձագանքման, դիմակայունության մեխանիզմների ներդրում | 1) սոցիալական շտապ օգնության, այդ թվում՝ մթերային բանկը, ձևավորված համակարգ՝ տեղական, միջազգային հասարակական բարեգործական կազմակերպությունների և այլ՝ մասնավոր և հատվածի, համագործակցությամբ<br><br>2) ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգում ներառված է աղետների, ռիսկերի դեպքում արագ արձագանքման մեխանիզմների ծրագրային փաթեթը | | 1) 2020թ. մարտի 3-րդ տասնօրյակ<br><br>2)2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 16.5 Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրում | 1) Սոցիալական աջակցության տարածքային մարմինների կառավարման բարելավված համակարգ՝ համապատասխան իրավական ակտերի նախագծերի առկայություն<br><br>2) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բոլոր | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 1)2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>2) 2023թ. | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | բաղադրիչների գործուն առկայություն՝ ներառյալ ֆիզիկական անհրաժեշտ ենթակառուցվածքներն ու տեղեկատվա-կան համակարգը | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 16.6 Բնակարանային ապահովության համալիր ծրագրի իրականացում սոցիալական առանձին խմբերի համար | «Սոցիալական առանձին խմբերի համար բնակարանային ապահովության համալիր ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի առկայություն | | 2022թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե՝ |
| | | 16.7 Բնակչության սոցիալական իրավական գիտելիքների շրջանակի ընդլայնում | Զանգվածային լրատվամիջոցներով, այդ թվում՝ մարզային ուսուցողական բնույթի հաղորդումներով և հրապարակումներով գիտելիքների ընդլայնված շրջանակ | | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 17 | Սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրականացում | 17. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Օրենքի նախագծի ընդունմամբ ձևավորվելու է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարությամբ սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող հատվածի իրավական հենքը | | 2020թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 17.2 «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | 1) սոցիալական աշխատանքի մասնագետների որակի վերահսկողության ներդրված մեխանիզմներ<br><br>2) սոցիալական աշխատանքի իրականացման ստանդարտների առկայություն<br><br>3) սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն իրականացնող ԲՈՒՀ-երի կոնսորցիումի առկայություն<br><br>4) սոցիալական աշխատողի որակավորման կրեդիտային սանդղակի առկայություն<br><br>5) սոցիալական աշխատողների | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2020թ. մայիսի 3-րդ տասնօրյակ<br>1) 2021թ. մայիսի 2-րդ տասնօրյակ<br><br>2) 2021թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>3) 2020թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հավաստագրման սահմանված ընթացակարգ<br><br>6) աշխատողների վերապատրաստումների կարիքների գնահատման արդյունքների հաշվառմամբ վերապատրաստված<br><br>սոցիալական աշխատողներ<br><br>7) քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության վերապատրաստումների դասընթացներում ներառված սոցիալական աշխատողների կատարելագործման դասընթացներ<br><br>8) Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան «Սոցիալական աշխատանք» որակավորումների մշակված ոլորտային շրջանակների բնութագրերը | | 4) 2021թ. հունիսի 3-րդ տասնօրյակ<br><br>5) 2021թ. հունիսի 3-րդ տասնօրյակ<br><br>6) 2021թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>7) 2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>8) 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | 7) ՀՀ պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 17.3 Տնտեսության բոլոր ճյուղերում հանրային զգայուն, մարդու կենսապայմանների և կյանքի որակի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նոր ներդրվող, կամ գործողներում փոփոխություններ կատարող ծրագրերի, ռազմավարությունների իրավական ակտերի նախագծերի (այսուհետ՝ Ծրագիր) սոցիալական ազդեցության գնահատման իրականացում | 1) Ծրագրերի սոցիալական ազդեցության գնահատման հաստատված մեթոդաբանությունը<br><br>2) Ծրագրերը սոցիալական ազդեցության գնահատման բնականոն գործընթաց | | 1)2023թ. մայիսի 2-րդ տասնօրյակ<br><br>2)2023թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 18 | 1) Նախորդ | 18.1 «Երիտասարդ և երեխաներ | Կսահմանվեն երիտասարդ և երեխաներ | ՀՀ կենտրոնական | 2019թ. | ՀՀ պետական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումների մեղմում | ունեցող ընտանիքների աջակցության և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաթեթը) Վարչապետի աշխատակազմ ներկայացում | ունեցող ընտանիքների աջակցության հիմնական ուղղությունները (սկզբունքները) և ծրագրերը: | բանկ (համաձայնությամբ) | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | բյուջե |
| | 2) Ծնելիության խրախուսում, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցություն, ըստ անհրաժեշտության՝ գործող ծրագրերի վերանայում, հայրենադարձ ընտանիքների համար թիրախային ծրագրերի մշակվում՝ առաջնահերթ դիտարկելով երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքներին | 18.2 «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաթեթը) Վարչապետի աշխատակազմ ներկայացում | 1.Կվերանայվի Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի տարբերակման սկզբունքը:<br>2.Կվերանայվի Ընտանեկան դրամագլխի համակարգը, կընդլայնվի խնամքի նպաստի ծածկույթը: | | 2019թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| | | 18.3 «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Կվերանայվի 2021թ. հունվարի 1-ից հետո ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը: | | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| | | 18.4 «ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Կվերանայվի 2021 թվականի հունվարի 1-ից խնամքի նպաստի չափը: | | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 19 | Պետական կենսաթոշակների չափերի բարձրացում՝ ապահովելով գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ | 19.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում | 1.Աշխատանքային և զինվորական կենսաթոշակների միջին չափերի աճ՝ 10 %-ով:<br>2.Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերի սահմանում 26500 դրամ:<br>3.Նվազագույն կենսաթոշակի չափի սահմանում 26500 դրամ: | | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե Անհրաժեշտ լրացուցիչ միջոցները՝ նախորդ տարվա նկատմամբ՝ շուրջ 27,000,000.0 հազ դրամ |
| | | | 1.Աշխատանքային և զինվորական | | 2020թ. | ՀՀ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենսաթոշակների միջին չափերի աճ՝ 10 %-ով:<br>2.Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերի սահմանում 27500 դրամ:<br>3.Նվազագույն կենսաթոշակի չափի սահմանում 27500 դրամ: | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | պետական բյուջե Անհրաժեշտ լրացուցիչ միջոցները. Նախորդ տարվա նկատմամբ՝ շուրջ 28,000,000.0 հազ դրամ Բազային տարվա (2019թ.) նկատմամբ՝ շուրջ 55,000,000.0 հազ դրամ |
| | | | 1.Աշխատանքային և զինվորական կենսաթոշակների միջին չափերի աճ՝ 10 %-ով:<br>2.Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերի սահմանում 28500 դրամ:<br>3.Նվազագույն կենսաթոշակի չափի սահմանում 285000 դրամ: | | 2021թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե Անհրաժեշտ լրացուցիչ միջոցները. Նախորդ տարվա նկատմամբ՝ շուրջ 31,000,000.0 հազ դրամ Բազային տարվա (2019թ.) նկատմամբ՝ 86,000,000.0 հազ դրամ |
| | | | 1.Աշխատանքային և զինվորական կենսաթոշակների միջին չափերի աճ՝ 10 %-ով:<br>2.Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերի սահմանում 29500 | | 2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե Անհրաժեշտ լրացուցիչ միջոցները. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | դրամ:<br>3.Նվազագույն կենսաթոշակի չափի սահմանում 29500 դրամ: | | | Նախորդ տարվա նկատմամբ՝ 34,000,000.0 հազ դրամ Բազային տարվա (2019թ.) նկատմամբ՝ 120,000,000.0 հազ դրամ |
| 20 | 1) Առցանց եղանակով մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում և կոռուպցիոն ռիսկերի շարունակական նվազեցում՝ շահառուի և որոշում ընդունողների միջև շփումը նվազագույնի հասցնելու միջոցով<br>2) Շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավում<br>3) Կենսաթոշակի վճարման գործընթացի արդյունավետության բարձրացում՝ ատիճանական անցում վճարման անկանխիկ համակարգին | 20.1 Կենսաթոշակ և դրամական այլ վճարների վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացակարգերի վերակազմակերպում, նոր ընթացակարգերի ամրագրում ՀՀ օրենսդրությամբ և կիրարկում | 51 տարածքային բաժինների փոխարեն կձևավորվի սպասարկման կենտրոնների և կենսաթոշակների (նպաստների) նշանակման կենտրոններ Կբարձրանա ՀՀ պետական բյուջեի ծախսերի հասցեականությունը | | 2020թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| | | 20.2 «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Կվերացվի երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար փաստաթուղթ ներկայացնելու պահանջը, կթեթևանա շահառուների վարչական բեռը | | 2020թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| | | 20.3 Գործատուների մոտ գտնվող Աշխատանքային գրքույկների թվայնացում | Կապահովվի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-96-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի թիվ 882-Ն որոշման պահանջների կատարումը՝ միաժամանակ և հնարավորություն կտա ունենալ անձանց աշխատանքային գործունեության՝ մինչև 2013թ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն՝ բացառելով ոչ իրավաչափ փաստաթղթերի հիման վրա կենսաթոշակ նշանակելու | | 2020թ. հունվարի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 73,000.0 դրամ 350000 աշխատանքային գրքույկների համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հավանականությունը և նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը | | | |
| | | 20.4 Կենսաթոշակների, ծե-րության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպ-քում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների բնագավառում ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի մոդելի կիրարկում | Կբարձրանա ՀՀ պետական բյուջեի ծախսերի հասցեականությունը, կբարելավվի կենսաթոշակային ապա-հովության և նպաստների (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի) բնագավառների կառավարելիության մակարդակը, իրականացվող վարչարա-րության արդյունավետությունը | | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ |
| | | 20.5 Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում դիմումը մերժելու դեպքում՝ մերժման մասին ծանուցումը (ներառյալ՝ պատճառները) ինքնաշխատ եղանակով ձևավորելու, խնամքի նպաստը նշանակելու կամ մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ենթահամակարգի մշակում և գործարկում | Կավտոմատացվի որոշումների կայացման գործընթացի, կընդլայնվի այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակը, կբարելավվի կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառ-ների կառավարման համակարգի արդյունավետությունը: | ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 21,000.0 հազ դրամ |
| | | 20.6 Բանկերի հետ միանվագ դրամական վճարների և սոցիալական ապահովության հաշիվների վերաբերյալ տեղեկատվության ինքնաշխատ եղանակով փոխանակության համակարգի մշակում և գործարկում | Կավտոմատացվի որոշումների կայացման գործընթացը, կբարելավվի կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետությունը, այդ թվում.<br>1) առցանց դիմումի հիման վրա վճարման եղանակի (բանկի) ընտրությունն ապահովող ենթահամակարգի մշակում և ներդրում (գործարկում),<br>2) թաղման նպաստի վճարում՝ մեկօրյա ժամկետում: | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2020թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 30,000.0 հազ դրամ |
| | | 20.7 ՍԷԿՏ համակարգի հետ տեղեկատվության | Կպարզեցվի կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացում | ՀՀ ազգային | 2020թ. դեկտեմբերի | ՀՀ պետական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | փոխանակության և դրա կիրառության ընթացակարգերի կատարելագործում | վարչարարությունը, գործընթացի շրջանակներում կթեթևանա քաղաքացիների վարչական բեռը (պարտականությունները), կենսաթոշակառուի կողմից սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայությանը | անվտանգության ծառայություն | 2-րդ տասնօրյակ | բյուջե 40,000.0 հազ դրամ |
| | | 20.8 ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգի գործարկում | Կավտոմատացվի որոշումների կայացման գործընթացը, կբարելավվի կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառների կառավարման համակարգի արդյունավետությունը | | 2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 40,000.0 հազ դրամ |
| | | 20.9 Առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելն ապահովող ենթահամակարգի մշակում և գործարկում | Աշխատող կենսաթոշակառուն կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումը կարող է ներկայացնել առցանց | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 10,000.0 հազ դրամ |
| | | 20.10 «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում | Պետական կենսաթոշակները, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստները, պարգևավճարները, պատվովճարները և այլ դրամական վճարումները կվճարվեն անկանխիկ եղանակով՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2019թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| **Առողջապահության նախարարություն** | | | | | | |
| 21 | Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով առողջ ապրելակերպի խթանում | 21.1. Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսու- | Ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկերի նվազեցում և բնակչության շրջանում ծխախոտի օգտագործման 7,5%-ով նվազեցում | Կրթության և գիտության նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն | 2019թ. մայիսի 3-րդ տասնօրյակից 2023թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ (պարբերաբար) | 2019թ.-ի համար նախատեսված է 26.869.300 ՀՀ դրամ<br><br>100 մլն ՀՀ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | թյամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապաստառների միջոցով) | | Ոստիկանություն<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | | դրամ՝ ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանությա ն պետական ծրագրի միջոցառումնե րի համար<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 21.2. Առողջության առաջնային պահպանման օղակի թերապևտների/ ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացների իրականացում՝ ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվության վերաբերյալ | Առողջության առաջնային պահպանման օղակում ծխախոտի օգտագործման դադարեցմանն ուղղված բնակչությանը աջակցություն ցուցաբերող առնվազն 1000 վերապատրաստված մասնագետների առկայություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2020թ. հունվարի 2-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ (ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանությա ն պետական ծրագրի միջոցառումնե րի համար նախատեսված 100 մլն ՀՀ դրամի շրջանակում) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 21.3. «Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Բնակչության առողջության ամրապնդում, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում՝ ռիսկերին ենթարկվող անձանց թվի նվազեցում՝ առողջ սննդի օգտագործման, ֆիզիկական ակտիվության, ծխախոտի օգտագործման և ալկոհոլի չարաշահումների վնասակարության վերաբերյալ իրազեկության բարձրացման շնորհիվ | Կրթության և գիտության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br><br>Բնապահպանության նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2020թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 22 | Էլեկտրոնային առողջապահության համակարգի ամբողջական ներդրում | 22.1 «Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | - Էլեկտրոնային առողջապահության համակարգի ամբողջական ներդրման ճանապարհային քարտեզի առկայություն | Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 23 | | 22.2. «Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | - Էլեկտրոնային առողջապահության համակարգի ամբողջական ներդրում, առողջապահական և բժշկական տվյալների, դեղատոմսերի, ուղեգրերի, անաշխատունակության թերթիկների թվայնացում<br>- էլեկտրոնային համակարգերի (էլեկտրոնային առողջապահության և շտապօգնության դիսպետչերական ծրագրի) ինտեգրում | Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 23 | Պայքար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ | 23.1. «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին»» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Միջոցառումների իրականացման ավարտին, մինչև 2023 թվականի ավարտը ԹՔՕՀ-ի ռիսկի գործոնների մասին բնակչության իրազեկվածության բարձրացում մինչև 25%, ԹՔՕՀ-ից մահացության ցուցանիշի նվազում 2,5%-ով | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Բնապահպանության նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 23.2. «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Միջոցառումների իրականացման ավարտին, մինչև 2013 թվականի ավարտը չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշի նվազում 2,5%-ով, վաղ հայտնաբերման ցուցանիշի բարելավում՝ 5%-ով<br>- 5 և 10 տարվա ապրելիության ցուցանիշների բարելավում՝ համապատասխանաբար 25%-ով և 10%-ով | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 23.3. Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | Միջոցառումների իրականացման ավարտին, սիրտ-անոթային հիվանդություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 24 | Առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում | 24.1. «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանն ուղղված ճանապարհային քարտեզի սահմանում, որի ներդրումը հիմք կհանդիսանա հետագա միջոցառումների իրականացման համար | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 24.2. «ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Առողջապահական համակարգի զարգացման երկարաժամկետ հստակ տեսլականի առկայություն | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 24.3. «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Մինչև 2023 թվականի ավարտը հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի նվազում մինչև 1%-ով, հետվիրահատական բարդությունների ցուցանիշի նվազում 10%-ով | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2020թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 24.4. «Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Փոխներարկումային բժշկական օգնության որակի և փոխներարկման անվտանգության ապահովում և վերահսկում, օգտագործման համար պիտանի, առկա արյան մասին տեղեկացվածության ապահովում | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Արտակարգ իրավիճակների | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | նախարարություն<br><br>Ոստիկանություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br><br>Անվտանգության խորհրդի գրասենյակ | | |
| 25 | Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների դեմ պայքար | 25.1. «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | Հրամանով հաստատված արտաընդերային վիրուսային հեպատիտների դեմ պայքար.<br>- վիրուսային հեպատիտ Ց-ով տարեկան առնվազն 1000 անձի ընդգրկում բուժման ծրագրում | | 2019թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավո-րում ՀՀ պետական բյուջեից տարեկան շուրջ 100 միլիոն ՀՀ դրամ |
| | | 25.2. Տուբերկուլոզին և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումների ծրագրերը (տուբերկուլոզ՝ 2021-2023 թթ., ՄԻԱՎ/ՁԻԱՀ՝ 2022-2023թթ.) հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | - ՀՀ-ում տուբերկուլոզով և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների առնվազն 80%-ի հայտնաբերում<br>- Հայտնաբերվածների առնվազն 90%-ի ընդգրկում բուժման ծրագրերում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Ֆինանսների նախարարություն<br><br>Կրթության և գիտության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և զարգացման | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>ՀՀ մարզպետարաններ | | |
| 26 | Մոր և մանկան, առողջության բարելավում, վերարտադրողական ներուժի ավելացում, ծնելիության անկման տեմպերի նվազեցում | 26.1. «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Ծրագրի հաստատման և ներդրման արդյունքում վերարտադրողական առողջության բարելավման և պերինատալ կորուստների նվազեցման միջոցով վերարտադրողական ներուժի ավելացում և ծնելիության ցուցանիշների բարելավում՝<br>տարեկան մինչև 100 դեպքով կորուստների նվազեցում | ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ) | 2019թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 27 | Բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների և պատրաստվածության շարունակական բարձրացման ու զարգացման ապահովում, առողջապահական համակարգում մարդկային ներուժի<br>համապարփակ և համալիր զարգացման ապահովում | 27.1. «Ավագ և միջին բուժաշխատողների շտեմարանի ձևավորման և վարման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Մշտապես թարմացվող մարդկային ներուժի էլեկտրոնային շտեմարանի ստեղծում և գործունեության ապահովում<br>Էլեկտրոնային առողջապահության համակարգին ինտեգրված բուժաշխատողների, զբաղվածության և պահանջարկի, ռեզերվային ռեսուրսների էլեկտրոնային կառավարում | Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 28 | Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մատչելիության և հասանելիության | 28.1. «Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը վարչապետի | Օրենսդրական հիմքերի ամրագրում, որի արդյունքում<br>բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեցող ապահովագրված | - | 2020թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավո- |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ապահովում | աշխատակազմ ներկայացնելը | յուրաքանչյուր քաղաքացու, հաստատված փաթեթների շրջանակներում, առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու հնարավորություն կտրվի | | | րում չի պահանջվում |
| 29 | Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական բուժօգնության մատչելիության և որակի բարելավում | 29.1. «Մանկական վերականգնողական բժշկական օգնության մատչելիության բարելավման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար զգալի կբարելավվի վերականգնողական բուժօգնության մատչելիությունը, այդ թվում.<br>1.Կստեղծվի մարզային վերականգնողական մանկական նոր կենտրոն,<br><br>2. Տարեկան շուրջ 100 երեխա կստանա վերականգնողական բուժում՝ արտահիվանդանոցային պայմաններում,<br><br>3. Կհատկացվի կլինիկական օրդինատուրայի 3 նպատակային տեղ մանկական վերականգնողաբան և 5 տեղ՝ կինեզոթերապևտ պատրաստելու համար | Ջինիշյան հիշատակի հիմնադրամ (համաձայնությամբ) | 2019-2020 թթ., ավարտ՝ 2020թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ |
| 30 | Մարզային հիվանդանոցների արդիականացում | 30.1. Վայոց Ձորի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով | Ժամանակակից չափանիշներին համապատասխան արդիականացված բժշկական հաստատություն Վայոց Ձորի մարզում | -- | Մեկնարկ՝ 2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>Ավարտ՝ 2021թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | գումար՝ շուրջ 2 մլն 770 հազ. դոլար |
| | | 30.2. Գեղարքունիքի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով | Ժամանակակից չափանիշներին համապատասխան արդիականացված բժշկական հաստատություն Գեղարքունիքի մարզում | - | Մեկնարկ՝ 2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>Ավարտ՝ 2021թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիր գումար՝ շուրջ 4 մլն 050 հազ. դոլար |
| | | 30.3. Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցում | Ժամանակակից չափանիշներին համապատասխան արդիականացված բժշկական հաստատություն Սյունիքի մարզում | - | Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեկնարկ՝ 2020թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ՝ շուրջ 509.07 մլն ՀՀ դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2021թ. հուլիսի 1-ին տասնօրյակ:<br><br>Շինարարական աշխատանքների մեկնարկ՝ 2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, ավարտ՝ 2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ: | |
| | | 30.4 Կոտայքի մարզի Նաիրիի բժշկական կենտրոնի կառուցում | Ժամանակակից չափանիշներին համապատասխան արդիականացված բժշկական հաստատություն Կոտայքի մարզում | - | Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեկնարկ՝ 2020թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ 2021թ. հուլիսի 1-ին տասնօրյակ:<br><br>Շինարարական | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ՝ շուրջ 805.0 մլն ՀՀ դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքների մեկնարկ՝ 2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, Ավարտ՝ 2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ: | |
| | | 30.5. Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ | Արագածոտնի մարզում ժամանակակից չափանիշներին համապատասխան արդիականացված բժշկական հաստատության շինարարական աշխատանքների մեկնարկ (քանդման աշխատանքներ, շինության ուժեղացում, ինժեներական ցանցերի անցկացում, միջնորմերի և տանիքի կառուցում) | - | Նախագծանախահաշվային փաստաթղթերի մեկնարկ՝ 2021թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, Ավարտ՝ 2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ:<br><br>Շինարարական աշխատանքների մեկնարկ՝ 2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ: | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ՝ 460 մլն ՀՀ դրամ, որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ շուրջ 30 մլն ՀՀ դրամ, շինարարական աշխատանքներ՝ շուրջ 430մլն ՀՀ դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 30.6. Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում | Կոտայքի մարզում ժամանակակից չափանիշներին համապատասխան արդիականացված բժշկական հաստատություն | - | Նախագծան ախահաշվայի ն փաստաթղթե րի մեկնարկ՝ 2021թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, Ավարտ՝ 2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ:<br><br>Շինարարակ ան աշխատանքն երի մեկնարկ՝ 2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, Ավարտ՝ 2023թվական ի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ: | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ՝ շուրջ 192 մլն ՀՀ դրամ |
| | | 30.7. Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ | Արագածոտնի մարզում ևս մեկ բժշկական հաստատության՝ Ժամանակակից չափանիշներին համապատասխան վերակառուցման շինարարական աշխատանքների սկիզբ | - | Նախագծան ախահաշվայի ն փաստաթղթե րի մեկնարկ՝ 2022թ.-ի դեկտեմբերի 1-ին | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ՝ շուրջ 28 մլն ՀՀ դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տասնօրյակ, ավարտ՝ 2023թ. հուլիսի 1-ին տասնօրյակ:<br><br>Շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ պայմանագրի կնքում՝ 2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ: | |
| | | 30.8. Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ | Արարատի մարզում ևս մեկ բժշկական հաստատության՝ Ժամանակակից չափանիշներին համապատասխան վերակառուցման շինարարական աշխատանքների սկիզբ | - | Նախագծանախահաշվային փաստաթղթերի մեկնարկ՝ 2022թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ 2023թ. հուլիսի 1-ին տասնօրյակ: Շինարարական աշխատանքների | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ՝ շուրջ 33.8 մլն ՀՀ դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | իրականացման վերաբերյալ պայմանագրի կնքում՝ 2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 31 | Վարակիչ հիվանդությունների կանխարգելում | 31.1. «2021-2023 թվականների Իմունականխարգելման ազգային ծրագիրը, Իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ-ում նպատակային քանակակազմերի շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության 90% և ավել ցուցանիշների ապահովում, կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով կայուն համաճարակային իրավիճակի ապահովում | Կրթության և գիտության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Պաշտպանության նախարարություն<br><br>Արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>Ոստիկանություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 31.2. Մարդու սպառման համար նախատեսված խմելու ջրի որակի մասին հրահանգի պահանջների համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանների լրամշակում և հաստատում | ՀՀ-ում գործող խմելու ջրի վերաբերյալ իրավական ակտերի պահանջների վերանայում՝ համապատասխանեցնելով 1998 թվականի նոյեմբերի 3-ի N98/83 ԵՄ դիրեկտիվի պահանջներին | Բնապահպանության նախարարություն<br><br>Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | 2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 32 | Մարզային բնակչության համար առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության ու մատչելիության ապահովում | 32.1. «Մարզային բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Կառավարության որոշման ընդունումից մեկ տարի հետո առնվազն 2 մարզային կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնում | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2022թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 33 | Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունների հասանելիության բարելավում | 33.1 «Երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների մատչելիության և որակի բարելավման ծրագրային միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | Երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների մատչելիության և որակի բարելավման արդյունքում ակնկալվում է.<br>1. Մանկական հոգեբուժական բաժանմունքի ստեղծում՝ 10-15 մահճակալով<br><br>2. Տարեկան շուրջ 75 երեխա կստանա հիվանդանոցային բուժում<br><br>3. Շուրջ 350 երեխա կստանա մասնագիտացված բուժում՝ արտահիվանդանոցային պայմաններում<br><br>4. նպատակային տեղ կհատկացվի մանկական հոգեբույժներ պատրաստելու համար | - | 2020-2021թթ., ավարտ՝ 2021թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված միջոցներ |
| 34 | ՀՀ բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում | 34.1. ՀՀ բնակչության ռիսկային խմբերի շրջանում սքրինինգային հետազոտությունների իրականացում՝ ըստ հետևյալ հիվանդությունների՝<br>•հիպերտոնիա,<br>•շաքարային դիաբետ,<br>•արգանդի պարանոցի քաղցկեղ | շուրջ 998.000 բնակչության ռիսկային խմբերում սքրինինգային հետազոտությունների իրականացում | - | Շարունակական, ավարտ՝ 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային և դրամաշնորհային ծրագրեր (շուրջ 1 մլն 200 հազար դոլար) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 34.2. Շարժական մամոգրաֆ սարքի ձեռքբերում և կրծքագեղձի սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության ռիսկային խմբերի շրջանում | Շուրջ 26.000 բնակչության ռիսկային խմբերում սքրինինգային հետազոտությունների իրականացում | | Շարունակական, ավարտ՝ 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագիր (շուրջ 730,000 դոլար) |
| 35 | Մարդակենտրոն, մրցունակ, արդյունավետ, անվտանգ, որակյալ առողջապահական համակարգի ստեղծում | 35.1. «ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում | Միջոցառումների իրականացման արդյունքում ԱԱՊ օղակում հիվանդանոցային, ինչպես նաև շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի թվի նվազում 10%-ով,<br>ԱԱՊ այցելությունների կառուցվածքում աշխատանքային տարիքի անձանց այցերի տեսակարար կշռի ավելացում 20%-ով,<br>մեկ բնակչին բաժին ընկնող ԱԱՊ այցերի թվի բարելավում մինչև 6 այց/տարեկան | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Կրթության և գիտության նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2023 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ մարզպետարաններ | | |
| **Արդարադատության նախարարություն** | | | | | | |
| **36** | Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծում | 36.1 «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննությունը կկատարվի մասնագիտացված վարչական պալատի միջոցով | - | 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ (17 մլն դրամ) |
| **37** | Կատարողական վարույթի արդյունավետության բարձրացում | 37.1 «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Կատարողական վարույթում կատարման ենթակա ակտերի յուրաքանչյուրի հաշվառմամբ կատարողական վարույթների առանձնահատկությունների ամրագրում, կատարողական ծախսերի տարբերակված դրսևորումների ամրագրում՝ ելնելով կատարողական գործողությունների ծավալից | Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն | 2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| **38** | Վարչական դատավարության արդյունավետության բարձրացում | 38.1 «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության բարեփոխում՝ ծանուցման, գրավոր ընթացակարգերի կիրառման բարելավում, էլեկտրոնային արդարադատության իրականացման նախադրյալների սահմանում | Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| **39** | Սնանկության վարույթի արդյունավետության բարձրացում | 39.1 «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» | Սնանկության կառավարիչների հաշվետվողականության բարձրացում, Արդարադատության նախարարության՝ | - | 2019թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | օրենքի նախագծի լրամշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | սնանկության կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության ամրագրում, սնանկության կառավարիչների վարձատրության վերանայում | | | |
| **40** | Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման ապահովման նախադրյալների ստեղծում | 40.1 «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և վարչապետի աշխատակազմ ներկայացում | Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգ սահմանելու մասին լիազորող նորմի ամրագրում | - | 2019թ. սեպտեմբերի 3-րդ տասն-օրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |
| **41** | Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման ապահովում | 41.1 «Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակում, սահման-ված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման իրականացման կարգի սահմանում | - | 2020թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |
| **42** | Մարդու իրավունքների պաշտպանություն | 42.1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրի տեսլականի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետական մարմինների գործողությունները համակարգված են, միասնական քաղաքականության իրականացումն ապահովված է | Պետական կառավարման համակարգի մարմիններ<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ դատախազություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |
| | | 42.2. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրի մշակում և վարչապետի աշխատակազմ ներկայացում | | | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 42.3. Մարդու իրավունքների | | | 2022թ. | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2023-2025թթ. Գործողությունների ծրագրի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | | ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| **43** | Բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորում, խտրականության դրսևորումների կանխում, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործում | 43.1 «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի մշակում և  վարչապետի աշխատակազմ ներկայացում | Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունները երաշխավորված են, խտրականության դեմ պայքարի բնագավառի օրենսդրությունը կատարելագործված է, խտրականության կանխարգելման, դրանից իրավական և դատական պաշտպանության իրավական հիմքերը ստեղծված են | - | 2019թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| **44** | Ազգային փոքրամասնու-թյուններին պատկանող ան-ձանց իրավունքների առա-վել արդյունավետ պաշտպանություն, օրենսդրական երաշխիքների ամրագրում | 44.1 «Ազգային փոքրամասնու-թյուների մասին» ՀՀ օրենքի մշակում և վարչապետի աշխատակազմ ներկայացում | Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանակը հստակեցված է, սահմանված են ազգային փոքրամասնությունների հիմնական իրավունքները և ազատությունները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները դրանց իրականացման ապահովման գործում, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց խնդիրները և իրավունքների իրացման հետ կապված հարցերը քննարկելու համար խորհրդակցական մարմնի կազմավորման օրենսդրական հիմքերը ստեղված են | - | 2019թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| **45** | Անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում | 45.1 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում, սահմանված կարգով | Կբարձրացվի գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմա-նափակման  շեմը՝ միաժամանակ | - | 2020 թվականի մարտի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե (40 մլն դրամ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | ավելացնելով հանրային պաշտպանների թիվը | | | |
| **46** | Փաստաբանական սխալից ապահովագրության արդյունավետ մեխանիզմի ներդնում | 46.1. Առաջադեմ փորձի ուսումնասիրության հիման վրա փաստաբանական սխալի ապահովագրության ինստիտուտի ներդրման հայեցակարգի մշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Կամրապնդվի փաստաբանական ծառայություններից օգտվողների պաշտպանվածությունը և լիարժեքորեն կապահովվի վնասների հատուցման հնարավորությունը | Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)<br><br>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2020թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 46.2. Հայեցակարգը Կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո՝ համապատասխան օրենսդրական փաթեթի մշակում, որով կնախատեսվի, որ անձը փաստաբանական սխալի դեպքում հատուցում ստանա ապահովագրական ընկերությունից, կսահմանվի վնասի հատուցման չափանիշները, վնասի տեսակները և այլն: | | | 2020թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| **47** | Իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատող ապացույցների շրջանակի ընդլայնում՝ ներառելով վկայի ցուցմունքներ և քրեական պատասխանատվության նախատեսում վկայի կողմից նոտարին սուտ ցուցմունք տալու համար | 47.1.«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատող ապացույցների շրջանակը ընդլայնվել է՝ ներառելով վկայի ցուցմունքը, նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստը չհաստատելու համար հիմք հանդիսացող այլ կարգով նախատեսված դեպքերից բացառվում է դատական կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման հնարավորությունը և | | 2019 թվականի հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 47.2. Համապատասխան կարողությունների զարգացման նպատակով նոտարների վերապատրաստում և միաժամանակ հանրության իրազեկման բարձրացում | քրեական պատասխանատվություն է սահմանվում նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից նոտարին սուտ ցուցմունք տալու համար: | | 2020 թվականի առաջին, երկրորդ եռամսյակ | |
| **48** | Հայաստանի Հանրապետությունում առաջիկա 5 տարիների կտրվածքով իրականացվելիք իրավական և դատական բարեփոխումների մշակում | 48.1. «Հայաստանի Հանրապե-տության իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրա-գրի տեսլականի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Նոր ռազմավարությամբ հստակ կսահ-մանվեն այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են դատական և իրա-վական համակարգի շարունակական կատարելագործման համար: | - | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 48.2 «Հայաստանի Հանրապե-տության իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրա-գիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նա-խագծի մշակում, շահագրգիռ մարմիններին կարծիքի ներկայացում, յուրաքանչյուր գործողության համար սահմանել կատարող, ապահովել միջազ-գային փորձաքննությունը և նա-խագծի լրամշակված տար-բերակի ներկայացումը վարչապետի աշխատակազմ | | | 2019 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **49** | Պայքարը կոռուպցիայի դեմ | 49.1 «Հայաստանի Հանրապե-տության հակակոռուպ-ցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | Հանրային քննարկումների, ռիսկերի գնահատումների, ոլորտային հետա-զոտությունների, միջազգային գործընկերների հետ համագործակցության արդյունքում կընդունվի նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը, որի ընդունմամբ կորոշվեն հետագա՝ 2019-2022 թվա-կանների տարիների հակակոռուպ-ցիոն ուղղությունները՝ հստակ միջոցառումներով | ՀՀ նախարարություններ<br><br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ ազգային ան-վտանգության ծառայություն<br><br>ՀՀ պետական վերահսկողական ծառայություն<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>Հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br><br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպությու-ններ (համաձայնու-թյամբ) | 2019 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 49.2. Կոռուպցիոն հանցագոր- | Նախագծերի փաթեթով կստեղծվի անկախության երաշխիքներ ունեցող և | ՀՀ գլխավոր դատախազություն | 2020թ. սեպտեմբեր | ԵԱՀԿ, օրենքով |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ծությունների բացահայտման և անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմով օժտված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ օրենսդրական նա-խագծերի փաթեթի ներկայացում վարչապետի աշխատակազմ | մասնագիտացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ, որին կվերապահվի անհրաժեշտ գործիքակազմ ՝ այդպիսով ապահովելով կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնական մեթոդաբանությունը և այդպիսի հանցագործությունների քննության արդյունավետության բարձրացումը: | (համաձայնությամբ)<br><br>Հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ ազգային ան-վտանգության ծառայություն<br><br>ՀՀ պետական եկա-մուտների կոմիտե<br><br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) | ի 3-րդ տասնօրյակ | չարգելված այլ աղբյուրներ |
| | | 49.3 Ակտիվների վերադարձի վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Ակտիվների վերադարձի ինստիտուտը վերանայվել է: Ստեղծվել են ակտիվների վերադարձման իրավական կառուցակարգեր: | ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>Հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | 2020թ. դեկտեմբեր ի 2-րդ տասնօրյակ | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br><br>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | | |
| **50** | Հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության, գույքի և եկամուտների թափանցիկության ապահովում | 50.1 «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Սահմանվել են համապատասխան կարգավորումներ, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող և պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխան լիազոր մարմնին նոտարական կարգով լիազորում են աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին: Ընդլայնվել է պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի՝ հրապարակման ենթակա տվյալների ցանկը: | Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) | 2020թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 50.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է նշանակման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության կանոնների պահպանումը (չպահպանումը) ու կոռուպցիոն իրավախախտումներում ներքաշված լինելը (չլինելը) ստուգելու և, ըստ այդմ, տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի | | 2020թ. մարտի 3-րդ տասն-օրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | եզրակացություն ներկայացնելու գործառույթ: | | | |
| **51** | Տնտեսական գործունեության թափանցիկության ապահովում | 51.1. «Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու վերաբերյալ» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակայնությունն ապահովված է: | Պետական կառավարման համակարգի մարմիններ | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 51.2. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Սահմանված կարգով հաշվառված լրատվամիջոցների համար պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց՝ միասնական պետական գրանցամատյանում առկա տեղեկություններ ստանալու համար վերացվել է պետական տուրք վճարելու պայմանը: | | 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| **52** | Օրենքի առջև բոլորի հավասարության, արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ապահովում | 52.1. ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ | ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը կկատարելագործվի և կհամապատասխանեցվի միջազգային չափանիշներին: | - | 2019 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| | | 52.2. ՀՀ քրեակատարողական ոլորտի ռազմավարության և դրա իրականացման միջոցա-ռումների ծրագրի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Նոր ռազմավարությամբ և դրա իրականացման միջոցառումների ծրագրով կթիրախավորվեն այն գործողությունները, որոնց միջոցով կերաշխավորվի պատժի նպատակների արդյունավետ իրացումը, ինչպես նաև կբարձրացվի ՀՀ քրեակատարողական համակարգի գործունեության արդյունավետությունը | | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| | | 52.3. «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում վարչապետի աշխատակազմ | «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ընդունմամբ կլուծվեն պրոբացիայի ոլորտում գործնականում առաջացած խնդիրները և կապահովվի ՀՀ արդարադատության | | 2020 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | նախարարության պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը | | | |
| | | 52.4. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Նախագծի ընդունմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված խափանման միջոցների շարքում կնախատեսվեն կալանավորմանն այլընտրանք հանդիսացող նոր խափանման միջոցներ, որոնց կիրառման արդյունքում գործնականում կնվազեն կալանավորման կիրառման դեպքերը | | 2020 թվականի հունվարի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| | | 52.5. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում վարչապետի աշխատակազմ | Ազատությունից զրկված անձի իրավունքների երաշխավորման նպատակով ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և հարակից օրենքներում կամրագրվի պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննության կառուցակարգ | | 2019 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| | | 52.6. ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների ներդրման նպատակով ՀՀ կառավարությանն առաջարկություն ներկայացնելը | Քրեական պատիժների առկա համակարգի և միջազգային լավագույն փորձի վերլուծության հիման վրա կներկայացվի առաջարկություն ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների ներդրման վերաբերյալ: | | 2020 թվականի հունվարի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| | | 52.7. «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (108 կոնվենցիա) փոփոխող արձանագրության (108+ կոնվենցիա) ստորագրում և վավերացում | «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (108 կոնվենցիա) փոփոխող արձանագրությունը (108+ կոնվենցիա) ստորագրելը և վավերացնելը Հայաստանի Հանրապետության համար կապահովի համապատասխանեցում անձնական տվյալների պաշտպանության միջազգային արդի զարգացումներին: | Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 52.8. Անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող, ինչպես նաև գործող իրավական ակտերի համապատասխանեցում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին | Անձնական տվյալների մշակում նախատեսող ներպետական ամբողջ օրենսդրությունը կհամապատասխանեցվի անձնական տվյալների մշակման սկզբունքներին, ինչը մի կողմից անձնական տվյալների պաշտպանության ապահովման կարևոր բաղադրիչ է, մյուս կողմից՝ կապահովի իրավական որոշակիություն և թույլ կտա անձնական տվյալների մշակման հարցերում խուսափել տարընթերցումներից: | Պետական կառավարման համակարգի մարմիններ | 2020 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ, այդուհետ՝ պարբերաբար | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **53** | Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի (e-justice.am) մշակում և ներդնում | 53.1 Իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի վերաբերյալ և դրա հիմա վրա մշակել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրման վերաբերյալ ծրագիր, ինչպես նաև էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր: | 53.1.1 Միջազգային փորձի հիման վրա հաստատված է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրման վերաբերյալ ծրագիրը:<br>53.1.2 Ծրագրով ամրագրվել են էլեկտրոնային արդարադատության միասնական ծրագրի նկարագիրը, կառուցվածքը, ստանդարտները, ծրագրի ներդրման փուլերը:<br>53.1.3 Միջոցառումների ծրագրում ներկայացվում է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները: | ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>«Էկենգ» ՓԲԸ,<br>ՀՀ ոստիկանություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>Պետական եկամուտների կոմիտե,<br>Հատուկ քննչական ծառայություն, | 2019թ.-ի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրում Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագիր |
| | | 53.2 Մշակել և ներդրել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգ (e-justice.am)՝ դրանով միավորելով | Ներդրված է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգը (e-justice.am): Արդարադատության ոլորտի մարմիններում գործող բոլոր | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ միջոց: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | արդարադատության մար-միններում գործող բոլոր էլեկ-տրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները: | էլեկտրոնային համակարգերի և տվյալների շտեմարանների միջև ապահովված է փոխգործելիություն: Բոլոր այն մարմիններում, որոնցում ներդրված չէ էլեկտրոնային կառավարման համակարգը, այն կմշակվի և կներդրվի: | (համաձայնությամբ)<br><br>Քննչական կոմիտե, (համաձայնությամբ)<br><br>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) | | |
| | | 53.3 Արդիականացնել դատարաններում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը և դրանց հիման վրա Դատարաններում ներդնել և գործարկել դատական միասնական էլեկտրոնային կա-ռավարման համակարգ՝ քաղաքացիական, քրեական, վարչական և սնանկության գործերով (e-justice) | Դատարաններում ներդրված և գործարկված է միասնական էլեկտրոնային կառավարման համակարգը: Համակարգը հնարավորություն կտա էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու, էլեկտրոնային դատական գործ ստեղծելու և ներկայացնելու, կազմելու, ծանուցումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու, գործի նյութերին էլեկտրոնային եղանակով ծանոթանալու ծրագրային ապահովումը և ծրագիրը գործում է: Դատարաններում ներդրված է և գործում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Ապահովված է գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փո-խանցումը, ինչպես նաև կողմ-կողմ, կողմ-դատարան ծանուցման արդյունա-վետ համակարգի գործարկումը, հնարավոր է դատարան ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը: | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| | | 53.4 Ապահովել իրավապահ (Ոստիկանություն, Հետաքննու- | Ապահովված է արդարադատության բոլոր մարմինների միջև էլեկտրոնային | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | թյան և Նախաքննության մարմիններ, Դատախա-զություն), դատական և իրավակիրառ մարմինների (ԴԱՀԿ, Քրեակատարողական ծառայություն, Պրոբացիայի ծառայություն) միջև էլեկտրո-նային փաստաթղթաշրջանառու-թյան համակարգի ստեղծումը: | փաստաթղթաշրջանառությունը: | | | միջոց: |
| | | 53.5. Ապահովել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի (e-justice.am) փոխգործելիությունը էլեկտրոնային կառավարման այլ համակարգերի և տվյալների շտեմարանների հետ, ինչպես նաև արդիականացնել համակցվող էլեկտրոնային կա-ռավարման այլ համակարգերը և տվյալների շտեմարանները: | Ապահովված է արդարադատության միասնական համակարգի և արդիականացված էլեկտրոնային կա-ռավարման այլ համակարգերի, տվյալների շտեմարանների միջև փոխգործելիություն: | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| | | 53.6 Ներդրել պաշտոնական առցանց նամակագրության համակարգ, համակարգի միջոցով ապահովելով էլեկ-տրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավա-բանական անձանց համար հնարավորություն ստեղծել առցանց կապ հաստատել, դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնել պետական մարմիններին, բացի այդ, ընձեռել գործի ընթացքին | Ներդրված է պաշտոնական առցանց նամակագրության համակարգը իր բոլոր բաղադրիչներով: | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ միջոց: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | առցանց հետևելու հնարավո-րություն: | | | | |
| | | 53.7 Ապահովել համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը վարույթի ողջ ընթացքում | Ապահոված է վիճակագրական ճշգրիտ տվյալների հիման վրա ոլորտի մոնիտորինգի և գնահատման հնա-րավորություն: | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| | | 53.8 Ապահովել թվային ար-խիվների ստեղծումը: | Ապահոված է արխիվների թվայնացումը: | | 2019-2023թթ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| **54** | Խոշտանգումների անպատժելիության դեմ պայքարի իրավական հիմքերի ամրապնդում | 54.1 Առաջադեմ փորձի ուսումնասիրություն, ՀՀ քրեական օրենսգրքում և «Ներման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Սահմանվել են խոշտանգում կատարած անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք նախատեսող կարգավորումները | - | 2019թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **55** | Հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդնում | 55.1 Հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդնմանն ուղղված անհրաժեշտ կազմակերպչական միջոցառումների իրականացում և անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների մշակում | Հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտը ներդրված է: | ՀՀ դատախազություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br>ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ պետական եկամուտների | 2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | կոմիտե<br>ՀՀ ոստիկանություն | | |
| **56** | Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում | 56.1 ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Նախագծերի ընդունմամբ կկատարելա-գործվեն և միջազգային չափանիշներին կհամապատասխանեցվեն ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, կբարձրանա քրեական արդարադատության արդյունավետությունը | - | 2019 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **57** | Դատարանների շենքային պայմանների փաստացի վիճակի բարելավում | 57.1 Դատարանների կամ դրանց նստավայրերի վարչա-կան շենքերի թվի ավելացում, վարչական շենքերի վերակառու-ցում և վերանորոգում 2020 թվականից սկսած | Արդյունավետ դատական պաշտպանու-թյան իրավունքի երաշխավորում | - | 2023 թվականի մարտի 1-ին տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| **58** | Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավում | 58.1 Քրեակատարողական հիմնարկի և դատապարտյալ-ների հիվանդանոցի կառուցում: Քրեակատարողական հիմնարկ-ների շենքային պայմանների բարելավում՝ վերակառուցումներ և կապիտալ վերանորոգում 2020 թվականից սկսած | Օրենքի առջև բոլորի հավասարության, արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ապահովում, ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորում | - | 2023 թվականի մարտի 1-ին տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| **59** | Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակում | 59.1 Վարչական իրավախախ-տումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանա-ռում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Նախագծի ընդունմամբ կբարձրանա վարչական արդարադատության արդյունավետությունը | - | 2019 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| **60** | Քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացում | 60.1 Հայաստանի Հանրապե-տության քաղաքացիական դատավարու-թյան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում, սահման- | Քաղաքացիական դատավարության իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների գույքագրման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծում | - | 2019թ. նոյեմբերի 1-ին տասն-օրյակ | Ֆինանսավոր-րում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ված կարգով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | | | | |
| **61** | Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների խթանում | 61.1.«Ֆինանսական համակարգում արբիտրաժային հաստատության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի սահմանված կար-գով շրջանառում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ դատական գործերի քննության ժամկետների և ծախսերի կրճատում, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացում | - | 2019թ. նոյեմբերի 1-ին տասն-օրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |
| | | 61.2. Օրենքով սահմանված կարգավորումների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում | | | 2020թ. առաջին, երկրորդ եռամսյակ | |
| **62** | Ստեղծել արդարադատության իրականացմանն աջակցող մարմինների իրավական փաստաթղթերի միասնական արխիվ | 62.1.Օրենսդրական կարգավորմամբ սահմանել մի շարք մարմինների իրավական փաստաթղթերի արխիվացման կարգ. | Միջոցառման կատարումը հնարավորություն կտա ունենալ միասնական արխիվ: Հնարավոր կլինի պահպանել կարևոր իրավական փաստաթղթերը, իսկ դրանց որոնումը ու ձեռքբերումը դյուրին կլինի | - | 2023թ. մարտի 1-ին տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ միջոց: |
| | | 62.2. Արխիվի պահման համար ձեռք բերել անհրաժեշտ տա-րածք՝ շենքային պայմաններով | | | | |
| **63** | Ստեղծել մեկ տարածքում տեղակայված քաղաքացիների սպասարկման կենտրոն, որտեղ դիմողների համար հնարավորություն կստեղծվի «մեկ պատուհանի» սկզբունքով ստանալ ՔԿԱԳ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ծառայություններ մատուցող պետական այլ հիմնարկների կողմից մատուցվող | 63.1. Համապատասխան ծառայությունների ստացման համար հարմարեցված տարածքի առանձնացում, կահավորում, տեխնիկայով հագեցում | Արդյունքում ստեղծելով միասնական տարածքում քաղաքացիների ընդունե-լության սպասասրահ՝ յուրաքանչյուր գործառույթի համար առանձին պատուհաններով, հնարավորություն կընձեռվի փաստաթղթերի ընդունումը կազմակերպել front office-ում, ընդ որում հերթի էլեկտրոնային համակարգով և համապատասխան խորհրդատուներով, իսկ փաստաթղթերի ուսումնասիրությունը և գործառույթների կատարումը կազմակերպել նույն տարածքում կամ կենտրոնական | - | 2020թ. մարտի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ծառայություններ | 63.2. Ծառայություններ մատուցող անձանց վերապատրաստում | գրասենյակներում տեղակայված back office-ում, որը նաև իրականացնելու է տարածքից դուրս գտնվող սպասարկման կենտրոնների կողմից ստացված կամ էլեկտրոնային դիմումների քննարկումը և գործարքների հաստատումը: | | | |
| **Արտակարգ իրավիճակների նախարարություն** | | | | | | |
| 64 | ՀՀ սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացում, բնակչության պաշտպանության, ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովում՝ քաղաքացիական պաշտպանության հենակետերի միջոցով | 64.1 Տավուշի և Վայոց ձորի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 4-ական քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում | Բնակավայրերի բնակչության, տարածքների, կարևորագույն օբյեկտների և ենթակառուցվածքների պաշտպանության ապահովում | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Տավուշի և Վայոց ձորի մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ) | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ - 2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, 90 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2021թ.- 30մլն դրամ 2022թ.- 30մլն դրամ 2023թ.- 30մլն դրամ |
| 65 | Քաղաքացիական պաշտպանության ոլորտի կառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության պլանավորման և վերահսկման մեխանիզմների արդյունավետության բարձրացում | 65.1 ԱԻՆ պահեստային կառավարման կետի վերանորոգում և կահավորում | ՔՊ միջոցառումների կառավարման և արձագանքման համակարգի կատարելագործում | - | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ - 2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, 70 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2021թ.- 35մլն դրամ 2022թ.- 35մլն դրամ |
| 66 | Հակահրդեհային գույքի | 66.1 ԱԻՆ ՓԾ Սյունիքի, Լոռու, Շիրակի մարզային | Փրկարար ուժերի հրդեհներին դիմակայելու բարձր | - | 2020 թվականի | Ճապոնիայի միջազգային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բարելավում | ստորաբաժանումների հակահրդեհային գույքով ապահովում | պատրաստվածություն, գույքի հագեցվածություն | | մարտի 1-ին տասնօրյակ | համագործակցության գործակալության (JICA) դրամաշնորհային միջոցներով՝ 13 մլն 750.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 67 | Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծում և զարգացում | 67.1 Երևանում, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում կամավորական արձագանքման խմբերի ստեղծում, դասընթացների և վարժանքների իրականացում | Արտակարգ իրավիճակների արձագանքման ժամանակահատվածի կրճատում, մարդկային կորուստների, ինչպես նաև բնակչությանն ու պետությանը պատճառված վնասի չափերի նվազեցում | Հայկական կարմիր խաչի ընկերություն (համաձայնությամբ) | 2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Եվրամիություն, Դանիայի, Ավստրիայի Կարմիր Խաչի ընկերությունների դրամաշնորհային միջոցներ 80.000 եվրոյին համարժեք դրամ |
| 68 | Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացում | 68.1 «Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգ»-ի լրամշակված նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացումն ապահովող իրավական դաշտի կատարելագործում | - | 2021թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 68.2 Աղետների վաղ ազդարարման կենտրոնացված համակարգի զարգացում | Աղետներին արագ և արդյունավետ ար-ձագանքում, հավաստի օպերատիվ տեղեկատվության տրամադրման հնարավորություններ, մարդկային կո-րուստների և տնտեսական վնասների նվազեցում | Տարածքային կա-ռավարման և զար-գացման նախա-րարություն, մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ - 2023թ դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, 2 մլրդ 250 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2021թ.- 750մլն դրամ 2022թ.- 750մլն դրամ 2023թ.- 750մլն դրամ |
| 69 | Տուժած բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով վրանային ավանի ստեղծում | 69.1 1000 մարդու կենսաապահովման համար անհրաժեշտ վրանների քանակի հաշվարկ, համապատասխան քանակի վրանների ձեռք բերում և պահեստավորում | Վրանային տնտեսության պահուստի ստեղծում, արտակարգ իրավիճակներում տուժածների առաջնային կենսաապահովման իրականացում | - | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ - 2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Պետական բյուջե, 85 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2020թ.- 30մլն դրամ 2021թ.- 30մլն դրամ 2022թ.- 25մլն դրամ |
| 70 | Պետական նյութական պահուստի կառավարման արդյունավետության բարձրացում | 70.1 «Նյութական պահուստի մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների լրամշակված նախագծերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ նյութական պահուստի համակարգի բարեփոխումները և զարգացումը ապահովող կատարելագործված իրավական դաշտ | - | 2019 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 70.2 «Նյութական պահուստի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | | | «Նյութական պահուստի մասին» օրենքի ընդունումից հետո՝ 6-ամսյա ժամկետում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 71 | Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների արդյունավետ կանխատեսում ու վաղ ազդարարում, դրանց արագ արձագանքման համակարգի կատարելագործում | 71.1 Կառավարման, կազմակերպական կարողությունների զարգացում, կանխատեսման մոդելների ուսուցանում | Հիդրոմետ ծառայության կանխատեսումների և տեղեկատվության տրամադրման արդիականացված արդյունավետ համակարգի առկայություն | - | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | 483 մլն դրամ, որից՝ ՄԱԶԾ դրամաշնորհային միջոցներ, 388 մլն դրամ, Համաշխարհային բանկ «Հայաստանի համար աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիր», դրամաշնորհային միջոցներ 95 մլն դրամ |
| | | 71.2 Հիդրոօդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում | Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում | | | |
| | | 71.3 Հիդրոօդերևութաբանական երևույթներից առաջացած կորուստների և վնասի հաշվառման, վերլուծության և արխիվացման միասնական համակարգի ձևավորում և տեղեկատվու-թյան հասանելիության ապահովում | Տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմների զարգացում | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 72 | Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, գետային էկոհամակարգերի պահպանություն և կառավարում | 72.1 Քասախի և Հրազդանի գետավազանների 7 (2 ջրամբարային, 5 գետային) և սահմանային Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետերի արդիականացում, տվյալների գրանցման և առցանց փոխանցման համակարգերով զինված չափիչ սարքավորումների տեղադրում | Մակերևութային ջրային ռեսուրսների մոնիտորինգի տվյալների արժանահավատության բարձրացում, որոշում կայացնողներին առավել ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովում, ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում | - | 2020թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Եվրամիության Արևելյան գործընկերության երկրների «Ջրային նախաձեռնություն պլյուս» ծրագիր, դրամաշնորհային միջոցներ 55 մլն դրամ |
| | | 72.2 Ախուրյանի ավազանի հիդրոլոգիական դիտակետերի արդիականացում | | | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Գերմանական զարգացման բանկի (KFW) վարկային միջոցներ, 60 մլն դրամ |
| 73 | Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում և պահպանություն | 73.1 Սևանա լճի ավազանում 6 ավտոմատ օդերևութաբանական կայանների ձեռքբերում և տեղադրում | Սևանա լճի ջրային հաշվեկշռի կազմում, բարելավում և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարձրացում և ջրային ռեսուրսների կանխատեսումների որակի բարելավում | - | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ - 2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, 70 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2021թ.- 23,4մլն դրամ 2022թ.- 23,4մլն դրամ 2023թ.- 23,4մլն դրամ |
| | | 73.2 Ջրային մակերևույթից գոլորշացման ճշգրիտ գնահատման նպատակով Սևանա լճի ավազանում (ГГИ-3000) գոլորշաչափերի տեղադրում | | | | |
| 74 | Մթնոլորտային երևույթների շուրջօրյա դիտարկումների տարածքների ընդլայնում | 74.1 Հակակարկտային պաշտպանության զարգացման համար նոր սերնդի դոպլերային ԴՄՌԼ-10 տեսակի ռադիոլոկացիոն 2 կայանների ձեռք բերում և տեղադրում Արմավիրի և Շիրակի մարզերում | Մթնոլորտային երևույթների դիտարկումների տարածքների ընդլայնում, գործող կայանների տարածքների (դրանց խափանման դեպքերում) դիտարկում, հակակարկտային պաշտպանության զարգացում, վտանգավոր հիդրոօդերևութաբանական | - | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ - 2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, 1 մլրդ 752 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | երևույթների գերկարճաժամկետ կանխատեսումների համակարգի ներդրում | | | ծախսերի ծրագիր 2020թ.- 16մլն դրամ 2021թ.- 876մլն դրամ 2022թ.- 860մլն դրամ |
| 75 | Սեյսմիկ վտանգի գնահատում | 75.1 Ազգային մոնիթորինգային դիտացանցի հիդրոերկրաքի-միական, ռադոնաչափական, մագնիսաչափական կայանների և ԱԻՆ «ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի հիդրոերկրաքիմիական լաբորատորիայի վերազինում, GPS նոր սարքերի տեղադրում | Առավել ճշգրիտ և իրական ժամանակում ստացված հասանելի տեղեկատվություն, առաջնային սեյսմիկ վտանգի՝ երկրաշարժերի և դրա հետ կապված՝ երկրորդային սեյսմիկ վտանգների հուսալի մոնիթորինգ, ժամանակին և հուսալի գնահատում | - | 2022թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ասիական զարգացման բանկ, վարկային միջոցներ 402 մլն 230 հազ. դրամ |
| 76 | Սեյսմիկ ռիսկի գնահատում և նվազեցում | 76.1 «Հայաստանի Հանրապե-տության պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության հուսալի գնահատված համակարգ | - | 2021թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում |
| | | 76.2 «Վայոց Ձորի մարզի Ջերմուկ  քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման պիլոտային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Ջերմուկ քաղաքի սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների առաջին փուլի համակարգված իրականացում՝ սեյսմիկ պաշտպանության տեսակետից կարևոր նշանակության օբյեկտների՝ բազմաբնակարան բնակելի շենքերի տվյալների հավաքագրված և վերլուծված բազա | | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 76.3 «Հայաստանի Հանրապետության բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրագրերի մշակման և ներդրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Սեյսմիկ ռիսկի նվազեցմանն առնչվող հարցերում պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական ու այլ կազմակերպությունների միջև հաստատված համագործակցություն, ուսուցանված և իրազեկված բնակչություն | | 2020թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 77 | Արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացում | 77.1 Արտակարգ իրավիճակներում բնակչության վարքականոնների վերաբերյալ դասընթացների, վարժանքների ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում | Բնակչության մոտ ձևավորված անհրաժեշտ հմտությունների, վարքականոնների վերաբերյալ գիտելիքների առկայություն | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 77.2 Տավուշի մարզի 11 սահմանամերձ համայնքների քաղաքացիական պաշտպանության թիմերի վերապատրաստում և առաջին օգնության գիտելիքների թարմացում, համալրված անդամների ուսուցում, առաջին օգնության գույքի տրամադրում | Համապատասխան կարողությունների, գիտելիքների, հմտությունների և գույքի առկայություն, առաջին օգնության գիտելիքներով զինված հրահանգիչներ | Հայկական կարմիր խաչի ընկերություն (համաձայնությամբ) | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտե, դրամաշնորհային միջոցներ 4 մլն 630.000 դրամ |
| 78 | Տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառի իրավական դաշտի կատարելագործում | 78.1 «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում՝ տեխնածին վթարները և արտադրական պատահարները բացառելու նպատակով | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2019 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 78.2 «Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Պարտադիր ապահովագրության ենթարկված առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների հաստատված ցանկ | | 2020 թվականի փետրվարի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 78.3 «Վերելակային տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության ապահովման և պետական կարգավորման մասին հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Միջազգային և միջպետական նորմերին ու չափանիշներին համապատասխանեցրած վերելակների շահագործմանը ներկայացվող տեխնիկական անվտանգության պահանջներ | | 2020 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 79 | Ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնի (ՌՀՀԱԿ) կարողությունների հզորացում | 79.1 ՌԴ ուսումնական հաս-տատություններում և Ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնում ԱԻՆ փրկարար ծառայության անձնակազմի որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում ՌԴ մասնագետների ներգրավմամբ, այդ նպատակով բազմաֆունկցիոնալ վարժահրապարակի կառուցում | Որակավորված, բարձրակարգ մասնագետների առկայություն, արտակարգ իրավիճակներում արագ արձագանքում և հետևանքների նվա-զեցում, բազմաֆունկցիոնալ վարժահրապարակի առկայություն | - | 2020թ. (վերապատրաս-տումը ըստ պլան-ժամանակացույցի) | Ուսուցումը ՌԴ ԱԻՆ ֆինանսավորմամբ Վարժահրապարա-կի կառուցումը ՌԴ և ՀՀ համատեղ միջոցներով (ՀՀ պետական բյուջեից 10 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2020թ.- 10 մլն դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 79.2 Ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնի տարածքի ցանկապատում և տարածքի տեսադիտարկման համակարգի ներդրում, ճանապարհների ասֆալտապատում | Տարածքում գտնվող գույքի պահպանության ապահովում | | 2020 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 102 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2020թ.- 102մլն դրամ |
| 80 | Համայնքների աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացում | 80.1 Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա | Համայնքների խոցելիության և կարողությունների գնահատված տեղեկատվության առկայություն | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Մարզպետարաններ Համայնքապետարաններ (համաձայնությամբ)<br>ԱՌՆԱՊ հիմնադրամ (համաձայնությամբ)<br>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ (թվով 20 համայնքներ)<br>2020 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ (թվով 45 համայնքներ)<br>2021 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ (թվով 45 համայնքներ)<br>2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ (թվով 45 համայնքներ)<br>2023 | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 80.2 Համայնքներում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների դասակարգում՝ համայնքի բյուջետային միջոցներին համապատասխան | Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների առկայություն | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ (թվով 45 համայնքներ) | |
| | | 80.3 Համայնքային զարգացման ծրագրերի վերանայում՝ աղետների ռիսկի նվազեցման բաղադրիչի ներառման նպատակով | Համայնքների զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման ներառված միջոցառումներ | | 2020 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 81 | Սողանքների ռիսկի կառավարում | 81.1 Առավել վտանգավոր սողանքային տեղամասերի պարբերական դիտարկումների իրականացում, առկա թվով 131 ակտիվ սողանքներից 14-ի գործիքային հետազոտություն | Սողանքի սպառնալիքի կամ ակտիվացման դեպքում օպերատիվ արձագանքում: Կանխարգելիչ միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում | - | Մշտապես | ՀՀ պետական բյուջե 125 մլն դրամ ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2020թ.- 48.5մլն դրամ 2021թ.- 43մլն դրամ 2022թ.- |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 33.7մլն դրամ |
| 82 | Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործընթացի մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծում | 82.1 «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործընթացի մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը<br><br>82.2 Մոնիթորինգի համակարգի փորձարկում, ուսուցում, ներդրում | Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացված մոնիթորինգ | ԱՌՆԱՊ հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 83 | Հրշեջ-փրկարարների ծառայության բնականոն պայմանների ապահովում | 83.1 Հրշեջ-փրկարար ջոկատների թվով 46 շենքերի մասնակի նորոգում | Հրշեջ-փրկարար ջոկատների տարածքային ստորաբաժանումների շենքային բարելավված պայմաններ | - | 2020 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ – 2023 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, 1մլրդ 540 մլն դրամ<br>ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր<br>2020թ.-500մլն դրամ<br>2021թ.- 520մլն դրամ<br>2022թ.- 520մլն դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 84 | Բնակչության պաշտպանության ոլորտի կատարելագործում | 84.1 «Բնակչության պատսպարման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Պաշտպանական կառույցների ֆոնդի կուտակումը, պահպանումը, նախապատրաստումը ապահովող հստակեցված հիմնադրույթներ | - | 2020 թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 85 | Արտակարգ իրավիճակների նախարարության զարգացում | 85.1 «Արտակարգ իրավիճակների նախարարության զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների պլանավորում և իրականացում | - | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| **Արտաքին գործերի նախարարություն** | | | | | | |
| 86 | Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության պաշտպանություն: Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովում. Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացում: Բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հա-րաբերությունների շարունակական զարգացում: Միջազգային ու տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներ-գրավվածության ավելացում: Երկկողմ և բազմակողմ ձևաչա-փերում համագործակցության խորացում, ուղղված Հայաստանի կայուն զարգացմանը, նոր շուկաներ մուտքի ապահովմանը և | 86.1 Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորում, հիմնված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա: | Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի ապահովում: Արցախի կարգավիճակի և անվտանգության ապահովում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.2 Հետևողական աշխատանքների իրականացում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման ուղղությամբ | Ցեղասպանության ճանաչման գործընթացի և հանրահռչակման ապահովում | Սփյուռքի նախարարություն | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.3 Աջակցում ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող ջանքերին: Ցեղասպանությունների հիշատակման և կանխարգելման օրակարգով միջոցառումների անցկացում, այդ թվում՝ ընդդեմ ցեղասպանության հանցագոր-ծության չորրորդ և հինգերորդ Գլոբալ ֆորում | Հայաստանի Հանրապետության, որպես ցեղասպանությունների կանխարգելման միջազգային ասպարեզում առաջամարտիկի դերի ամրապնդում | - | Նախատեսվում է անցկացնել երկու տարին մեկ՝ 2020-2022 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | դեպի Հայաստան ու Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացմանը: Միջազգային և տարածաշրջանային անվտանգության ապահովում ու հակամարտությունների խաղաղ կարգավորում: Կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցություն: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն, ժողովրդավարության ամրապնդում, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելում: | 86.4 Եվրասիական տնտեսական միությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության արդյունավետության բարձրացում: Եվրասիական տնտեսական միությունում ՀՀ նախագահության պատշաճ անցկացում | ԵՏՄ և ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության տնտեսական և անվտանգության շահերի ապահովում | Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն | 2019-2023<br><br>01.01.2019-01.12.2019 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.5 Ռուսաստանի Դաշնության հետ ամենատարբեր բնագավառներում ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների զարգացում | Տնտեսական զարգացման և անվտանգության ավելի բարձր մակարդակի ապահովում, բազմոլորտ համագործակցության խորացում, ռազմավարական համագործակցություն | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.6 ԱՄՆ-ի հետ տարբեր ոլորտներում բարեկամական գործընկերության հետևողական ամրապնդում և խորացում | Հայաստանի զարգացման ու բարեփոխումների օրակարգի աջակցություն, բազմոլորտ համագործակցության խորացում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.7 Եվրոպական երկրների հետ բարեկամական և գործընկերային հարաբերությունների խորացում և ընդլայնում: ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկում | Եվրոպական երկրների հետ բազմոլորտ համագործակցության խորացում, CEPA պայմանագրի իրագործում, Հայաստանի զարգացման օրակարգի նպաստում, քաղաքական երկխոսության ամրապնդում, վիզաների ազատականացում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.8 Իրանի և Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացում | Հայաստանի և տարածաշր-ջանային անվտանգության ապահովում և ամրապնդում, տարածաշրջանային բազմոլորտ համագործակցության զարգացում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.9 Չինաստանի հետ բարեկամական հարաբերությունների վրա հիմնված բազմաոլորտ լայն համագործակցության ծավալում | Տնտեսական և քաղաքական կապերի զարգացում: ՀՀ ներ-դրումային ծրագրերի աջակցում, բազմոլորտ համագործակցության, քաղաքական երկխոսության խորացում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | և ընդլայնում | | | | պահանջվում |
| | | 86.10 Հնդկաստանի և Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ փոխգործակցության զարգացում և խորացում | Տնտեսական և քաղաքական կապերի զարգացում: ՀՀ–ում ներդրումային ծրագրերի աջակցություն | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.11 Փոխգործակցության ընդլայնում Միջին Արևելքի գործընկեր երկրների հետ | Տնտեսական և քաղաքական կապերի զարգացում: ՀՀ–ում ներդրումային ծրագրերի աջակցություն: Տարածաշրջանային անվտանգությանը նպաստող համագործակցություն | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.12 Համագործակցության զարգացում Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի պետությունների հետ | Տնտեսական և քաղաքական կապերի զարգացում: ՀՀ–ում ներդրումային ծրագրերի աջակցություն | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.13 ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածություն | ՀՀ շահերի պաշտպանություն բազմակողմ ձևաչափով, մի-ջազգային համագործակցության, անվտանգության զարգացման, մարդու իրավունքների և այլ բնագավառներում, մասնակցություն խաղաղապահ առաքելություններին | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.14 ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցություն: ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում | ԱՊՀ երկրների հետ հարաբերությունների զարգացում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.15 ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, անհատական գործընկերության գործողությունների ծրագրի և պլանավորման ու վերանայման գործընթացի հետևողական իրագործում | ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության իրականացում, միջազգային խաղաղապահ առաքելությունների մասնակցություն, ՀՀ ԶՈՒ փոխգործունակ կարողությունների ամրապնդում և բարեփոխումների առաջընթացի համար աջակցության ապահովում | Պաշտպանության նախարարություն | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.16 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը | Հայաստանի քաղաքական օրակարգի ներկայացում և առաջմղում: Հայաստանի | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հայաստանի ներգրավվածության խորացում, ՖՄԿ-ում Հայաստանի նախագահության բարձր մակարդակով անցկացում | հեղինակության բարձրացում, Ֆրան-կոֆոն անդամ երկրների հետ երկկողմ կապերի հաստատում | | | լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.17 Հայաստանի տնտեսական զարգացման աջակցություն: Կայուն զարգացման օրակարգի, արդիական գիտելիքահենք, ստեղծագործ ու նորարարական նախաձեռնությունների, ծրագրերի ու գործընթացների խթանում Միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներում տնտեսական բաղադրիչի արդյունավետության բարձրացում: Սփյուռքի գործարար ներուժի առավել արդյունավետ ներգրավում: Միջազգային տնտեսական ինտեգրացիոն կառույցների շրջանակներում ՀՀ տնտեսական շահերի առաջմղում | Տնտեսական անվտանգության ապահովում, միջազգային լավագույն օրինակների ու փորձառության փոխառում, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտում և արտաքին ներդրումների խրախուսում, դեպի Հայաստան զբոսաշրջության խթանում | Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>Սփյուռքի նախարարություն | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.18 Աջակցում միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման ուղղությամբ ջանքերին: | Սպառազինությունների վերահսկում և չտարածում, ահաբեկչության և անդրազգային սպառնալիքների դեմ պայքար | Պաշտպանության նախարարություն | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.19 Հայ ժողովրդի քաղաքակրթական արժեքների և ժառանգության պաշտպանություն և հանրահռչակում: Մշակութային և գիտակրթական կապերի խորացում | Արտերկրում հայ ժողովրդի ինքնության ամրապնդում, հայկական պատմամշակութային ժառանգության պահպանություն: Ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդում | Մշակույթի նախարարություն | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 86.20 Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի | ՀՀ քաղաքացիների և իրավա-բանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանություն: Արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության | Արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | պաշտպանություն: Արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության ցուցաբերում | ցուցաբերում | | | պահանջվում |
| | | 86.21 Հայաստանում և միջազգային ասպարեզում ժողովրդավարական հաստատությունների ամրապնդում | Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն, իրավունքի գերակայություն և լավ կառավարում | - | 2019-2023 | ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| **Բնապահպանության նախարարություն** | | | | | | |
| 87. | Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանություն և կառավարում | 87.1. Ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման և պահպանության նպատակով ջրային ռեսուրսների, այդ թվում Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների, քանակական, որակական գնահատում, տնտեսական արժեքի ձևավորում և հիդրոլոգիական ու քիմիական կանխատեսումների մշակում | 1. Ջրային ռեսուրսների արդի միջազգային պայմաններին համապատասխան, լիարժեք պահպանության և օգտագործման նպատակով ջրային ռեսուրսների կառավարմանն ուղղված առաջարկությունների մշակում:<br>2. Նպատակի ձևավորում: Ըստ ջրավազանային կառավարման տարածքների և ելնելով տվյալ շրջանի զարգացվածության միտումներից ջրային ռեսուրսների տնտեսական արժեքի ձևավորում՝ հենվելով հետագա օգտագործման ու չօգտագործման պարագաներին: Անհրաժեշտության դեպքում հոսքերի վերաբաշխման ռազմավարության մշակում:<br><br>3. Ջրային ռեսուրսների քանակական, որակական գնահատում: Ըստ ջրային ռեսուրսի հիդրոաշխարհագրական, հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական և այլ տեսակի առանձնահատկությունների «լավ էկոլոգիական վիճակի հղումային պայմանների/ռեֆերենտ պայմանների» որոշում ու հստակեցում և դրանից ելնելով՝ հստակ գործողությունների՝ ուղղված ջրային ռեսուրսի փաստացի վիճակը ռեֆերենտին հասցնելուն: | ԷԵԲՊՆ ջրային կոմիտե | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե և/կամ ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ մոտ 96 000.0 հազ դրամ<br><br>2020թ.՝ 30000.0 հազ դրամ,<br><br>2021թ.՝ 30000.0 հազ դրամ<br><br>2022թ.՝ 36000.0 հազ.դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 4. Ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կանխատեսումների մշակում՝ ելնելով կլիմայի փոփոխությունից: Բազիսային, լավատեսական և վատատեսական սցենարների կազմում: | | 2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 87.2 Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակում և նախագծերը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Սևանի (Սևանա լիճն իր ջրհավաք ավազանով) և Հրազդանի (Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերն իրենց ջրհավաքներով) ջրավազաններում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցում.<br><br>Ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռում, ինչի արդյունքում կհստակեցվի ջրի այն քանակը, որի առաջարկի դեպքում պահանջվող ջրաքանակը բնությանը վնաս չի հասցնի/ Ջրային ռեսուրսների արդյունավետ և ողջամիտ կառավարում.<br><br>Ջրային ռեսուրսի խնայողություն: | Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,<br>Գյուղատնտեսության նախարարություն,<br>Արտակարգ իրավիճակների նախարարություն,<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն,<br>Առողջապահության նախարարություն,<br>Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ<br><br>«Արևելյան համագործակ-ցության Եվրոպայի ջրային նախաձեռնություն պլյուս» (EUWI+) ծրագիր մոտ 50 000,0 հազ դրամ |
| | | 87.3 Հյուսիսային | Հյուսիսային (Դեբեդ և Աղստև գետերը՝ | Էներգետիկ | 2023թ. | ՀՀ պետական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | իրենց ջրհավաքներով և Քուռ գետի վտակները՝ իրենց ջրհավաքներով) ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցում.<br><br>Ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռում, ինչի արդյունքում կհստակեցվի ջրի այն քանակը, որի առաջարկի դեպքում պահանջվող ջրաքանակը բնությանը վնաս չի հասցնի/Ջրային ռեսուրսի արդյունավետ և ողջամիտ կառավարում.<br><br>Ջրային ռեսուրսի խնայողություն:<br><br>1. Հյուսիսային ջրավազանի հիմնական նկարագրի կազմման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում<br><br>2. Դաշտային աշխատանքների արդյունքում հաշվի առնելով հավաքագրված տվյալները՝ ջրի պահանջարկի գնահատում ըստ ոլորտների<br><br>3. Տվյալների ճշգրիտ ամփոփում և արդյունքում վերջնական ծրագրի կազմում | ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br><br>Գյուղատնտեսության նախարարություն<br><br>Արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | բյուջե և/կամ ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ մոտ 34 000.0 հազ դրամ:<br><br>2020թ.՝ 12000.0 հազ դրամ<br><br>2021թ.՝ 12000.0 հազ դրամ<br><br>2022թ.՝ 10000.0 հազ.դրամ |
| | | 87.4 «Գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդը և վերջինիս կիրարկման մեխանիզմները սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Գետի ինքնամաքրման կարողությունը գնահատման մեթոդիկայի առկայություն, ինչը կնպաստի գետերի աղտոտումը մեղմելու կամ կանխելու, ինչպես նաև գետը աղտոտող տնտեսական օբյեկտների գործունեությունը կանոնակարգելու և գործունեության նկատմամբ որոշակի | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2021 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | սահմանափակումներ ներկայացնելու կարևորագույն խնդրի լուծմանը: | | | |
| | | 87.5 «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Ջրաէկոհամակարգի պահպանության և հավասարակշռության ապահովման նպատակով հանրապետության այն գետերի ցանկի սահմանում, որտեղ արդեն նպատակահարմար չէ նոր փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը.<br><br>Փոքր հիդրոէլեկտրակայաններով գետերի հետագա ծանրաբեռնման կանխարգելում: | Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br><br>Արտակարգ իրավիճակների նախարարություն | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 88. | Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում և պահպանություն | 88.1 Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում | Ջրի որակի վատթարացման և լճի ճահճացման կանխարգելում: | | 2019-2021թթ. | ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ 351 186.0 հազ. դրամ<br><br>2019թ.՝ 117062.0 հազ. դրամ, 2020թ.՝ 117062.0 հազ.դրամ, 2021թ.՝ 117062.0 հազ.դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 89. | Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անտառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում | 89.1 «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Անտառների կայուն կառավարման բաղադրիչների բարելավում. Ոլորտում իրականացվող քաղաքականությանը համահունչ իրավական հենքի ապահովում.<br>ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարում: | Արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավոր ում չի պահանջվում |
| | | 89.2 «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար անտառաշինական ծրագրերի (անտառակառավարման պլանների) մշակում և հաստատում նախարարի հրամանով | Անտառների կայուն կառավարում: | | 2019-2022թթ. | ՀՀ պետական բյուջե,<br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br>432349,5 հազ. դրամ 2019թ.՝ 113677.2.0 հազ. դրամ,<br>2020թ.՝ 318672.3.0 հազ.դրամ |
| | | 89.3 Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում | Անտառածածկ տարածքների ընդլայնում և անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների իրականացման համար որակյալ տնկանյութի ստացում:<br>Նախատեսվում է անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ 3658հա վրա:<br>Տնկարանի հիմնում՝ մոտ 30հա: | | 2019-2022թթ. | ՀՀ պետական բյուջե,<br>օրենքով չարգելված այլ միջոցներ<br>2618187.8 հազ. դրամ<br>2019թ.՝ 425842.8 հազ. դրամ<br>2020թ.՝ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 539520.0<br><br>հազ. դրամ, 2021թ.՝ 706233.0 հազ. դրամ, 2022թ,՝ 946592.0 հազ. դրամ: |
| | | 89.4 Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում | Ապօրինի անտառօգտագործման նվազում, կանխարգելում, անտառվերականգնման. անտառապատման, ինչպես նաև անտառտնտեսվարման աշխատանքների արդյունավետության բարձրացում: | Արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019-2022թթ. | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>1470900,0 հազ. դրամ |
| | | 89.5 Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության նպատակով անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների իրականացում, անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի իրականացման կազմակերպում | Առողջ անտառների առկայություն: Կկատարվի անցում անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը բացառապես կենսաբանական միջոցով իրականացնելուն՝ ստեղծված համապատասխան լաբորատորիաների օգնությամբ: | | 2019-2022թթ. | ՀՀ պետական բյուջե,<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ 437109.0 հազ. դրամ<br><br>2019թ.՝ 43710,9 հազ. դրամ<br><br>2020թ.՝ 131132.7 հազ.դրամ, 2021թ.՝ 131132.7 հազ.դրամ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2022թ.՝ 131132.7 հազ.դրամ |
| | | 89.6 Անտառների կադաստրի ստեղծման և վարման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, կադաստրի վարում | Անտառների կադաստրի վարման համար անհրաժեշտ հենքի ստեղծում, կադաստրի վարում: | | 2019-2022թթ. | ՀՀ պետական բյուջե,<br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br>60000,0 հազ. դրամ<br>2019թ.՝ 15000,0<br>հազ.դրամ<br>2020թ.՝ 15000.0<br>հազ.դրամ<br>2021թ.՝ 15000.0<br>հազ.դրամ<br>2022թ.՝ 15000.0<br>հազ.դրամ |
| | | 89.7 Անտառների պետական հաշվառում | Անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, որակական և քանակական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության առկայություն: | | 2023թ. | ՀՀ պետական բյուջե,<br>2023թ.՝ 200 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 000,0<br><br>հազ. դրամ |
| 90. | Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականութ<br><br>յան գործողությունների իրականացում՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորություն-ների,<br><br>շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցության ապահովումը, մասնակցությունը նոր նախաձեռնություն-ներին. | 90.1 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Միջոցառման նպատակն է իրավական հենքի ստեղծման միջոցով ապահովել մթնոլորտային օդի պահպանության արդյունավետ կառավարումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան և կայուն զարգացման համատեքստում: Ավելացվել են մի շարք հասկացություններ, որոնք կիրառվում են այլ երկրներում՝ օդի որակի գնահատման համար: Ավելացվել են նաև դրույթներ, կապված արտանետումների տեխնիկական նորմավորման, արտանետումների հաշվառման, լիազորությունների բաշխման հետ և այլն: | Առողջապահության նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորո ւմ չի պահանջվում |
| | | 90.2 «Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» ծրագրի իրականացում | Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության բարձրացում, ջրհեղեղների կանխարգելում, մարդածին ազդեցությունների հետևանքով խախտված բնական լանդշաֆտի վերականգնում:<br>Բնական և գյուղատնտեսական լադշաֆտների հարմարվողականության բարձրացում.<br>Ջրհեղեղների կանխարգելում | | 2019-2021թթ. | ՀՀ օրենքով չարգելված<br><br>այլ աղբյուրներ<br><br>ՄԱԿ-ի Հարմարվողա-կանության հիմնադրամ 698 893.7 հազ.դրամ |
| | | 90.3 Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի մշակում և նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Հայաստանի հարմարվողականության ազգային ծրագիրը կնպաստի՝<br><br>- երկրի խոցելիության գնահատմանը և կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ հարմարվողականության | Գյուղատնտեսության նախարարություն<br><br>Արտակարգ իրավիճակների նախարարություն | 2020թ. դեկտեմբերի<br><br>2-րդ<br><br>տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված<br><br>այլ աղբյուրներ<br><br>2.9 մլն. դոլար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կարողությունների ստեղծմանը,<br>- Հայաստանի զարգացմանը ուղղված գործընթացներում և ռազմավարություններում՝ բոլոր խոցելի ոլորտներում կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների ներառմանը,<br>- հարմարվողականության միջոցառումների ծրագրի և ծրագրի մոնիթորինգի պլանի մշակմանը: | Առողջապահության նախարարություն<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | | |
| 91. | Բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում | 91.1 Բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզագրում և կադաստրային իրավունքի վերագրանցում | Հստակեցված և պետական գրանցման իրավունքով սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքներ: | Անշարժ գույքի կադաստրի կոմիտե<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Շահագրգիռ մարզպետարաններ | 2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ<br>մոտ<br>200 000.0 հազ.դրամ |
| | | 91.2 Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակում | Բոլոր բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների առկայություն: | | 2023թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 91.3 «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակների և հիմքերի ամրագրում. Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ. IUCN) չափորոշիչներով սահմանված կատեգորիաների ամրագրում:<br><br>Արգելավայրերի պահպանության ռեժիմի ամրագրում. Պահպանման գոտու, էկոլոգիական միջանցքի, կենսոլորտային արգելոցի և էկոլոգիական ցանցի կառավարման սկզբունքների և պահպանության ռեժիմի ամրագրում: | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 91.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում | «Խոսրովի անտառ» պետական արգելոցին և «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության նվազեցում:<br><br>Դեգրադացված տարածքներում համայնքահեն խելացի գյուղատնտեսական գործելակերպի կիրառում, գյուղատնտեսական արտադրության արժեքային շղթաների ամրապնդում, համայնքներին կլիմայական խելացի տեխնոլոգիաների փոխանցում և գյուղատնտեսության վարման կլիմայական խելացի գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության,<br><br>պլանավորման, մոնիթորինգի և որոշումների կայացման ներուժի հզորացում: | Գյուղատնտեսության նախարարություն<br><br>Արարատի մարզպետարան<br><br>Տավուշի մարզպետարան<br><br>Լոռու մարզպետարան | 2019-2021թթ. | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ<br><br>ՄԱԿ-ի Հարմարվողա-կանության հիմնադրամ<br><br>(1.217.500.000 ՀՀ դրամ) |
| 92. | Կենսաբազմազանության պահպանությունը և | 92.1 «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում | Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի | Գիտությունների ազգային | 2023թ. | Ֆինանսավորում չի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կենսաանվտանգութ<br>յան ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում | փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | առկայություն:<br>Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու գործընթացի հստակեցում: | ակադեմիա<br>(համաձայնությամբ) | նոյեմբերի<br>3-րդ տասնօրյակ | պահանջվում |
| | | 92.2 «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի առկայություն<br>ՀՀ բուսական աշխարհի արդյունագործական, գյուղատնտեսական, գիտահետազոտական, կրթական, բնապահպանական և սոցիալական նպատակներով, այդ թվում նաև ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների օգտագործման գործընթացի կանոնակարգում և վարչարարության նվազեցում: | Գիտությունների ազգային ակադեմիա<br>(համաձայնությամբ) | 2023թ. նոյեմբերի<br>3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 92.3 Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառում, կադաստրների կատարելագործում | - Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների կադաստրների առկայություն<br>- բուսական և կենդանական տեսակների գիտականորեն հիմնավորված շարունակական օգտագործում ու վերարտադրություն: | ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն<br>(համաձայնությամբ)<br>ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ<br>(համաձայնությամբ) | 2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե կամ ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br>669681.94 հազ.դրամ<br>2020թ.՝ 231347.62 հազ.դրամ<br>2021թ.՝ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Երևանի պետական համալսարան<br>(համաձայնությամբ) | | 225170.64<br>հազ.դրամ<br>2022թ.՝<br>213163.68<br>հազ.դրամ |
| 93. | Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում | 93.1 «Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրականացման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Խախտված հողերի կենսաբանական վերականգնման նախընտրելի ուղղությունների և մեթոդների վերաբերյալ ուղեցույցի առկայություն: | | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե և/կամ օրենքով չարգելված այլ միջոցներ<br>Ֆինանսավորման չափը տվյալ փուլում հնարավոր չէ գնահատել: |
| | | 93.2 Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրակա-նացում | ՀՀ տարածքին համարժեք՝ նպատակային տեղեկատվության ստացում ապահովող առաջնային մոնիթորինգային ցանցի առկայություն:<br>1.Դիտահարթակների կահավորում Նմուշարկումներ դիտահարթակից և ընտրված «էտալոնային» տարածքներից:<br>2.Նմուշների քիմիական հետազոտություն՝ աղտոտվածությունը բնութագրող շուրջ 30 պարամետրերի որոշում:<br>Քիմիական հետազոտության արդյունքների վերլուծություն, մոնիթորինգային տվյալների շարքերի լրացում:<br>3.Թվային քարտեզների և տեղեկատվական բազայի ստեղծում | | 2020-2022թթ. | ՀՀ պետական բյուջե և/կամ ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ 100298.4 հազ.դրամ<br>2020թ.՝<br>34886.4<br>հազ.դրամ<br>2021թ.՝<br>47968.8<br>հազ.դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2022թ.՝ 17443.2 հազ.դրամ |
| | | 93.3 Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային հողերում սողանքային և սողանքավտանգ տեղամասերի գույքագրում | Գնահատել բնության հատուկ պահպանվող տարածքների հողային ծածկույթի վրա արտածին երկրաբանական երևույթների բացասական ազդեցությունը, հաշվառել սողանքային մարմիններով զբաղեցրած մակերեսները:<br>Բնության հատուկ պահպանվող տարածքներում սողանքային մարմինների տարածման և չափերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազայի (ներառյալ՝ մանրակրկիտ քարտեզագրական նյութերի) առկայություն:<br>1. Ֆոնդային և հրատարակված նյութերի ուսումնասիրություն, վերլուծություն, քարտեզագրական և տեքստային նյութերի լուսապատճենահանում, թվայնացում:<br><br>Մասշտաբային, աշխարհագրական հարաչափեր ունեցող տեղագրական հենքերի թվայնացում, ՀՀ կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա- և ապրելավայրերի կոորդինատային կապակցում:<br><br>2.Դաշտային տեղազննումներ, սողանքներով զբաղեցված տարածքների ռելիեֆի, լանջերի թեքության, բուսածածկի, մակերևույթի ճեղքավորության ակնադիտական | Արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019թ. և շարունակական | ՀՀ պետական բյուջե և/կամ ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ մոտ 122 535.0 հազ.դրամ<br><br>2020թ.՝ 9450.0 հազ.դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ուսումնասիրություն և նկարագրություն:<br><br>3.Դաշտային տվյալների ամփոփում, վերլուծություն, ավարտական հաշվետվության կազմում, սողանքների տեղադիրքերը արտահայտող թվային քարտեզների ստեղծու, սողանքների դասակարգում ըստ վտանգավորության աստիճանի | | | 2021թ.՝ 61740.0 հազ.դրամ<br><br>2022թ.՝ 51345.0 հազ.դրամ |
| | | 93.4 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար կատարվող վճարների կարգավորում՝ վերջնական կիստակեցվի ինչ ժամկետներում և ինչ չափով են կատարվելու նախատեսված վճարումները: | | 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 93.5 Հայաստանի Հանրապետության Արարատյան դաշտում հողերի չեզոք դեգրադացիայի գաղափարի իրականացում | - Արարատի մարզի Նարեկ համայնքում 10,0հա կաթիլային ոռոգմամբ պտղատու նոր այգու հիմնում<br><br>- Արարատի մարզի Նարեկ համայնքում 20,0հա նորատունկ այգիներում կաթիլային ոռոգման համակարգի ներդրում<br><br>- 30հա պտղատու այգիների և 1,0հա վարելահողի բարելավում | Արարատի մարզպետարան | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ<br><br>ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի» քարտուղարու |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենսահումուսով պարարտացման եղանակով<br>-2000մ ճանապարհների եզրով ծառերի տնկում: | | | թյուն<br>(48,651.3հազ.<br>դրամ) |
| 94. | Հանքերի փակման (ռեկուլտիվացիայի) ժամանակակից մեխանիզմների կիրառման խթանում | 94.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող վճարների կարգավորում (վերջնական հատկացում), ընդերքօգտագործողին դրամագլխից հատկացումներ կատարելու նպատակով՝ լիազոր մարմնի կողմից որոշում կայացնելու գործընթացի պարզեցում, հանքերի փակման ժամանակ խախտված տարածքների վերականգնման աշխատանքների ֆինանսավորման ապահովում: | - | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 94.2 «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման հստակեցում՝ իրավահարաբերությունների կարգավորում: | - | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 95. | Քիմիական նյութերի և թափոնների<br>(այդ թվում՝ ընդերքօգտագործ-ման) էկոլոգիապես անվտանգ | 95.1 «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման իրավական հիմքի առկայություն: | Առողջապահության նախարարություն<br>Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br>Արտակարգ | 2020թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կառավարում | | | իրավիճակների նախարարություն<br>Գյուղատնտեսության նախարարություն<br>Պետական եկամուտների կոմիտե | | |
| | | 95.2 Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրում | Ընդերքօգտագործման թափոններով զբաղեցրած հողերի հաշվառում (այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների), դրանց աղտոտվածության գնահատում, աղտոտվածության նվազեցմանն ու չեզոքացմանն ուղղված ծրագրերի կազմման համար ելակետային տվյալների առկայություն: | | 2019թ. և շարունակական | ՀՀ պետական բյուջե և/կամ ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br>մոտ 32880.0 հազ.դրամ<br>2020թ.՝ 8280.0 հազ.դրամ<br>2021թ.՝ 13560.0 հազ.դրամ<br>2022թ.՝ 11040.0 հազ.դրամ |
| | | 95.3. Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի/օբյեկտների ռեկուլտիվացիա | Լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիոն ծրագրերի մշակում և իրականացում, շրջակա միջավայրի և հարակից համայնքների վրա բացասական ազդեցությունների նվազեցում:<br>Նախատեսվում է ուսումնասիրել մոտ 40 հանքավայրերի վերաբերյալ ամբողջական նյութեր:<br>Գույքագրման և փաստացի տեղազննման աշխատանքներից հետո, հնարավոր կլինի հստակեցնել | | 2019-2023թթ. | ՀՀ պետական բյուջե և/կամ օրենքով չարգելված այլ միջոցներ.<br>(այս փուլում հնարավոր չէ հստակ գնահատել անհրաժեշտ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները: | | | գումարը) |
| | | 95.4 Թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում | Թափոնների հետևյալ խմբերի տեսակների՝ արդյունաբերական, գյուղատնտեսական, բժշկական, շինարարության և քանդման, թափոնների կառավարման ոլորտը կարգավորող մոտեցումներ՝ նպատակաուղղված այդ թափոնների առաջացման կանխարգելմանը կամ կրճատմանը, վերամշակմանը և օգտահանմանը: | | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 96. | Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի արդյունավետ իրականացումը. բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցում, ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը՝ ճանապարհային քարտեզով նախանշված գործողությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով | 96.1 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Օրենսդրության համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների պահանջներին:<br><br>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին:<br><br>Օրենքում կներառվի Ձեռնարկողի նախաձեռնությամբ փորձաքննության իրականացման հնարավորությունը, կառանձնացվի ռազմավարական էկոլոգիական գնահատումը, կամրագրվեն դրանց ենթակա լինելու մեխանիզմները, ամբողջովին նոր խմբագրմամբ կներկայացվի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման» հոդվածը և այլն: | Առողջապահության նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 96.2 «Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» | Օրենսդրության համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային | | 2019թ. նոյեմբերի 1-ին | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | կոնվենցիաների պահանջներին: | | տասնօրյակ | |
| | | 96.3 «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման մեթոդիկան հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացների իրավական հիմքերի առկայություն: | Առողջապահության նախարարություն | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 97. | Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը. | 97.1 Բնապահպանության նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվություններ տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում | Լիցենզիաների, թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման ոլորտում ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում և լիցենզիաների և թույլտվությունների ստացման ժամանակահատվածի կրճատում: | Արդարադատության նախարարություն<br><br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ) | 2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ<br>մոտ 15 000.0 հազ. դրամ |
| | | 97.2 Ջրային ռեսուրսների, հողերի, մթնոլորտային օդի, կենդանական ու բուսական աշխարհի վիճակի պետական մոնիթորինգի իրականացման, ստացված տվյալների հավաքագրման, վերլուծության, գնահատման և տեղեկատվության տարածման օրենսդրական դաշտի կարգավորում | Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի տվյալների միասնական համակարգի առկայություն և շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում: | Առողջապահության նախարարություն<br>Արտակարգ իրավիճակների նախարարություն<br>Տնտեսական զարգացման և ներդրումների | 2019-2022 թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | նախարարություն<br>Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | | |
| | | 97.3 Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտացանցերի արդիականացում | Մոնիթորինգի դիտարկումների, դիտակայանների և դիտացանցերի արդի տեխնոլոգիաներով հագեցվածության ապահովում: | | 2022 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br>725000.0 հազ.դրամ (նախնական գնահատմամբ) |
| | | 97.4 Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիայի կարողությունների զարգացում | Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով հագեցվածության ապահովում և միջազգային հավատարմագրված լաբորատորիայի առկայություն:<br>1. 539.1 քառ. մետր տարածքի վերանորոգման, կահավորման և լաբորատորիայի տեղափոխման աշխատանքների իրականացում. | | 2020թ.<br>նոյեմբերի<br>3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 73542.0 հազ.դրամ,<br>ՀՀ օրենքով չարգելված այլ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2. սարքավորումների համալրում, մասնագետների վերապատրաստում և լաբորատորիայի միջազգային հավատարմագրման գործընթացի նախապատրաստում: | | | միջոցներ<br>Եվրոպական միության Ջրային նախաձեռնություն պլյուս ծրագիր<br>մոտ 220 000.0 հազ.դրամ |
| | | 97.5 Շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում | Բնապահպանական ազգային պորտալի և թեմատիկ շտեմարանների առկայություն, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկատվության փոխանցման գործընթացի ապահովում: | Արտակարգ իրավիճակների նախարարություն Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>Առողջապահության նախարարություն<br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2023թ.<br>սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 97.6 Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար անտառների գույքագրման իրականացում՝ անօդաչու թռչող սարքի կիրառմամբ հանույթի միջոցով | Տեղանքի օրթոֆոտոհատակագծի և մակերևույթի թվային մոդելի առկայություն | | 2019թ. և շարունական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 97.7 Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների 2019թ հեղինակային հսկողության իրականացում՝ դաշտային | Վեկտորային շերտեր.<br>Նախնական տվյալների ճշգրտում: | | 2019թ.<br>դեկտեմբերի 3-րդ | Լրացուցիչ ֆինանսավորում չի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դիտարկումներ, ուսումնասիրություններ, GPS հանույթ | | | տասնօրյակ | պահանջվում |
| 98. | Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը. | 98.1 «Կանաչ տնտեսության» սկզբունքների ներդրման հայեցակարգի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | «Կանաչ» տնտեսության զարգացումն ապահովող տնտեսական մեխանիզմների և ցուցանիշների կառավարման համակարգի սկզբունքների կիրառում.<br><br>«Կանաչ» տնտեսության սկզբունքների ներդրման ապահովմանն ուղղված խնդիրները, դրանց լուծման (այդ թվում՝ «կանաչ» նորամուծությունների ներդրման խրախուսման տնտեսաիրավական) մեխանիզմների ներդրում | Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2020թ.<br>մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 99. | Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատում և արգելում | 99.1 «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Տնտեսական մեխանիզմների կիրառման միջոցով պլաստիկ թափոնների ծավալների կրճատում, մասնավորապես, մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների ծավալների կտրուկ կրճատում: | | 2019թ.<br>հունիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 100. | Շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրում, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների | 100.1 «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներով սահմանված բնապահպանական հարկերի ու բնօգտագործման վճարների տեսակների, դրույքաչափերի, դրանց հաշվարկման, վճարման, գանձման կարգի և ժամկետների, ինչպես նաև հարկային արտոնությունների վերանայում:<br>Փոքրածավալ և նվազ վտանգավորություն ներկայացնող, շրջակա միջավայրը աղտոտող տնտեսվարողների համար բնապահպանական հարկի հաշվարկման և վճարման պարզեցված | Ֆինանսների նախարարություն<br><br>Պետական եկամուտների կոմիտե | 2019թ.<br>նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հաշվանցման<br><br>մեխանիզմի) մշակում և ներդրում | | ընթացակարգերի, ընդհանրացված և տիպային հարկի (վճարների) համակարգի ներդրում: | | | |
| | | 100.2 «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Կրկնակի/ երկրորդային ջրօգտագործմանն ուղղված խրախուսիչ և այլ միջոցառումների մշակում: Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության արդյունավետության բարձրացում, մասնավորապես, ջրային ռեսուրսների երկրորդային օգտագործման ծավալների ավելացման շնորհիվ ջրառի կրճատում: | Ֆինանսների նախարարություն<br><br>Գյուղատնտեսության նախարարություն<br><br>ԷԵԲՊՆ ջրային կոմիտե | 2020թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 101. | Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացում | 101.1 էկոտուրիստական երթուղիների մշակում | Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացում և էկոտուրիզմի մասսայականացում՝ 6 էկոտուրիստական երթուղիների անցկացմամբ | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտե | 2019-2021թթ. | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 102. | Էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացում, էկոլոգիական գիտության դերի բարձրացում | 102.1 «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Կրթության բոլոր մակարդակներում էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացում | Կրթության և գիտության նախարարություն | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 102.2 Ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության համակարգի զարգացում՝ հանրային իրազեկման մեխանիզմների կիրառմամբ | Էկոլոգիական գիտելիքների զարգացում և գիտակցության ձևավորում:<br><br>Բնապահպանական թեմայով հաղորդաշարերի ստեղծում: | Կրթության և գիտության նախարարություն | 2020-2023թ. | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 102.3 «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ | Նախագծի ընդունումը կնպաստի Օրհուսի կոնվենցիայի ամբողջական | | 2019թ. նոյեմբերի | Ֆինանսավորում չի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | կիրարկման, ՀՀ Սահմանադրության և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների շրջանակներում շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը տնօրինող սուբյեկտին կընձեռի հնարավորություն պաշտպանելու հանրային շահն ու անվտանգությունը ոլորտին վերաբերելի խնդիրների կարգավորման հարցում: | | 1-ին տասնօրյակ | պահանջվում |
| 103. | Պետական կառավարման արդյունավետության բարձրացում, այդ թվում՝<br><br>- կրկնվող գործառույթների վերիանում՝ դանդաղ, ոչ արդյունավետ, անհարկի բյուրոկրատական ընթացակարգերի կրճատում, տարբեր պետական հիմնարկներում և ստորաբաժանումներում իրականացվող միևնույն տեսակի գործառույթների կենտրոնացում և մեկտեղում, գործառույթների ծախսատարության գնահատում և ծախսերի նվազեց-մանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացում | 103.1 Նախարարության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում | Բնապահպանության նախարարության արդյունավետ կառավարման համակարգի ստեղծում | | 2019թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| **Գյուղատնտեսության նախարարություն** | | | | | | |
| 104. | Չօգտագործվող գյուղա-տնտեսական նշանա-կության հողերի նպա-տակայնորեն օգտագործելու | 104.1 Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու ուղիների մշակում, | Իրավական ակտերի մշակման և կատարելագործման արդյունքում յուրաքանչյուր տարի գյու- | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | Մինչև 2020թ. 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ուղղությամբ խթանների ու մեխանիզմների մշակում | մասնավորապես չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու վերաբերյալ իրավական ակտի նախագծի մշակում և ընդունում | դատնտեսության ոլորտում շրջանառության մեջ նոր հողերի ներառում: | Մարզպետարաններ<br><br>Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ) | | |
| | | 104.2 Գյուղատնտեսական նշանակության հողերի տվյալների թվայնացված համակարգի ներդրում, մոնիթորինգի վարում | Գյուղատնտեսական հողերի՝ վարելահողերի և բազմամյա տնկարկների, առկա (փաստացի) վիճակի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի՝ թվայնացված քարտեզների առկայություն, որը կնպաստի հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը, հողի շուկայի և գործարար միջավայրի բարելավմանը: | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե<br><br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածք-ների և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանու-թյան նախարա-րություն<br><br>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ, 2.1 մլրդ դրամ |
| | | 104.3 Գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացման ծրագրի նախագծի մշակում և ընդունում | Մասնատված հողակտորների միավորմամբ խոշոր հողակտորների ստեղծում և դրանց ընդգրկում վաճառքի և /կամ վարձակալության ենթակա հողերի բանկ, արդյունքում՝ հողի շուկայի աշխուժացում և հողօգտա-գործման արդյունավետության բարձրացում | ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 2020թ-ից մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 104.4 Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերից օգտվող տնտեսավարողների ռեգիստրի ձևավորում | Տվյալների հավաքագրման արդյունա-վետ համակարգի ստեղծում, գրանցված և բանկային հաշիվ ունեցող ֆերմերների թվի ավելացում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2020թ-ից մինչև 2021թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| 105. | Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնո-լոգիաների կիրառում | 105.1 Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի | Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ոռոգվող հողատարածքների ավելացում՝ տարեկան 1800 հա-ով, արդյունքում՝ | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | իրականացում | ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ոռոգման ջրի հասանելիության մակարդակի բարձրացում, հողօգտագործողների եկամուտների աճ | | | 312 049 591 ՀՀ դրամ, 2020թ.՝ 552 683 304 ՀՀ դրամ, 2021թ.՝ 681 484 482 ՀՀ դրամ, 2022թ.՝ 714 650 000 ՀՀ դրամ, 2023թ.՝ 1 360 051 250 ՀՀ դրամ |
| | | 105.2 Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի իրականացում | Խաղողի, ինտենսիվ պտղատու այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության զարգացման, պտղի արտադրության ծավալների ավելացման և արտահանման ծավալների ավելացման համար հնարավորությունների ստեղծում | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 278 939 880 ՀՀ դրամ, 2020թ.՝ 451 387 080 ՀՀ դրամ, 2021թ.՝ 619 109 280 ՀՀ դրամ, 2022թ.՝ 786 831 480 ՀՀ դրամ, 2023թ.՝ 954 533 680 ՀՀ դրամ |
| | | 105.3 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրի իրականացում | Կարկտապաշտպան ցանցերով պատված պտղատու և խաղողի այգիների տարածքը յուրաքանչյուր տարի կավելանա 250 հա-ով: Կարկտապաշտպան ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի կարկտահարության ռիսկը: | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 170 113 095 ՀՀ դրամ, 2020թ.՝ 229 845 569 ՀՀ դրամ, 2021թ.՝ 205 453 459 ՀՀ դրամ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2022թ.՝<br>150 091 766<br>ՀՀ դրամ,<br>2023թ.՝<br>110 460 813<br>ՀՀ դրամ |
| | | 105.4 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի իրականացում | Յուրաքանչյուր տարի շուրջ 170 բնակավայրի համար ագրոքիմիական քարտեզների մշակում, որոնք հիմք կծառայեն գյուղատնտեսական մշակաբույսերի գիտականորեն հիմնավորված նորմաներով պարարտացման համար | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե<br>2019թ.՝<br>79 354 600<br>ՀՀ դրամ,<br>2020թ.՝<br>79 354 600<br>ՀՀ դրամ,<br>2021թ.՝<br>79 354 600<br>ՀՀ դրամ,<br>2022թ.՝<br>79 354 600<br>ՀՀ դրամ,<br>2023թ.՝<br>79 354 600<br>ՀՀ դրամ |
| | | 105.5 Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացում | Տավարաբուծության վարման արդիական տեխնոլոգիաների ներդրում, կենդանիների պահվածքի համար բարենպաստ պայմանների ստեղծում, անասնապահական ճյուղի ինտենսիվացում | Մարզպետարաններ | Մինչև 2021թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե<br>2019թ.՝<br>414 000 600<br>ՀՀ դրամ,<br>2020թ.՝<br>1 380 000 000<br>ՀՀ դրամ,<br>2021թ.՝<br>1 380 000 000<br>ՀՀ դրամ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 106. | Մեքենատրակտորային համակազմի թարմացման և գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ | 106.1 Հայաստանի Հանրապե-տությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի | ՀՀ գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակի բարձրացում, գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի տարեկան | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե<br>2019թ.՝ 192.5 մլն ՀՀ դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գյուղատնտեսության կարիքների բարելավում | պետական աջակցության ծրագրի իրականացում | շուրջ 2 % թարմացում | | | 2020թ.՝ 235.5 մլն ՀՀ դրամ, 2021թ.՝ 264.7 մլն ՀՀ դրամ 2022թ.՝ 264.7 մլն ՀՀ դրամ, 2023թ.՝ 292.5 մլն ՀՀ դրամ |
| 107. | Գյուղատնտեսական և գինե-գործական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանն աջակցող մեխանիզմների մշակում և ներդրում | 107.1 Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրա-կանացմանը | Հայաստանի Հանրապետության խաղողի տնկարկների կադաստրի ձևավորում, աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի ներդրում, պատշաճ մշակված կոլեկցիոն և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների այգիների առկայություն, միջազգային շուկաներում հայկական գինիների ճանաչելիության բարձրացում, արտահանման ծավալների աճ | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 300.0 մլն ՀՀ դրամ 2020թ.՝ 300.0 մլն ՀՀ դրամ 2021թ.՝ 300.0 մլն ՀՀ դրամ 2022թ.՝ 300.0 մլն ՀՀ դրամ 2023թ.՝ 300.0 մլն ՀՀ դրամ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 107.2 Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման նպատակով հանրապետության մարզերի տարածաշրջաններում հետբերքահավաքային կարիքների (հիրացման և մթերման կետեր, պահեստա-րաններ, սառնարանային տնտե-սություն և այլն) և մթերման | Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդ-րումային ծրագրի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվության առկայություն | Մարզպետարաններ | Մինչև 2022թ. 1-ին կիսամյակ. | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | կետերի ստեղծման համար անհրաժեշտ հողատարածքների և շինությունների գնահատում | | | | |
| 108. | Գյուղատնտեսությունում կոոպերացիայի զար-գացմանն օժանդակում, վերջիններիս կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադ-րյալների սահմանում | 108.1 Արտոնյալ պայմաններով կոոպերատիվների մասնակ-ցությունը պետական աջակ-ցության ծրագրերին | Գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, կոոպերատիվների գործունեության արդյունավետության բարձրացում, արդիական տեխնոլոգիաների ներդրում | | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 109. | Գիտակրթական-արտադ-րական կլաստերների ստեղծում, գյուղատնտե-սության և ագրարային ոլորտի կրթական, գիտական, գիտաար-տադրական և խորհր-դատվական կենտրոնների համագործակցության խորացում | 109.1 Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման միջազգային փորձի ուսումնասիրում, արդյունավետ գյուղատնտեսության վարման նպատակով տնտեսավարման տվյալ ձևի հեռանկարային ուղղությունների վերհանում, հանրապետությունում կլաստեր-ների ստեղծման հնարավորու-թյունների ուսումնասիրում | Գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի մշակման համար անհրաժեշտ նախա-պատրաստական աշխատանքների արդյունքում ձեռքբերված նյութերի և տվյալների ամփոփում, 5 կլաստերների մանրամասն ուսումնասիրում և դրանցից 2-ի տեղայնացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Մինչև 2022թ. 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 109.2 «Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակա-ցույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ընդունում, ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրագործում | Որակյալ մասնագետների ու ֆերմերների պատրաստման և վերապատրաստման, գյուղատնտեսական ուղղվածությամբ կրթական ծրագրերի նկատմամբ գրավչության բարձրացման, գիտա-հետազոտական և փորձա-կոնստրուկտորական աշխատանքների ակտիվացման և տեխնոլոգիաների փոխանցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, ինչպես նաև գյուղատնտեսական գիտելիքահենք արդյունքի ստեղծմամբ անձնական և ազգային բարեկեցության բարելավում, յուրաքանչյուր տարի առնվազն 2-3 երիտասարդ բանիմաց | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2021թ.-ից մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մասնագետներով խորհրդատուների կազմի համալրում, «ուսուցում ուսուցանողների» մեթոդով տարեկան 30 մասնագետների գիտելիքների և փորձի ամրապնդում՝ տեղական կամ միջազգային մասնագետների կողմից: | | | |
| 110. | Ագրոպարենային համա-կարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, սննդի անվտանգության համակարգերի ներդրման աջակցություն | 110.1 Հայաստանի Հանրապե-տությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում | Ագրոպարենային ոլորտում նորագույն սարքավորումներով հագեցվածության մակարդակի բարձրացում, ագրո-պարենային արտադրանքի որակի, անվտանգության և մրցունակության մակարդակի բարձրացում | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 450 352 602 ՀՀ դրամ, 2020թ.՝ 621 976 946 ՀՀ դրամ, 2021թ.՝ 762 631 484 ՀՀ դրամ, 2022թ.՝ 872 316 233 ՀՀ դրամ, 2023թ.՝ 951 031 140 ՀՀ դրամ |
| | | 110.2 Հայաստանի Հանրապե-տության սննդամթերքի անվտանգության ոլորտի գործող օրենսդրության կատարելագործում | Սանիտարական, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական ոլորտների Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումների մշակման և ընդունման արդյունքում իրավական կարգավորում կստանան Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական կատերով սահմանված պահանջները: | ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին | Մինչև 2020թ. 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորո ւմ չի պահանջում |
| 111. | Տեղական սերմնաբու-ծության և սերմարտադ- | 111.1 «Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային | Հանրապետությունում սերմ-նաբուծական տնտեսությունների | | 2019թ. | ՀՀ պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | րության, ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում | մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն» ծրագրի իրականացում | արտադրական կարողությունների հզորացում, բարձր վերարտադրության աշնանացան ցորենի, գարնանացան գարու, ոլոռի, ոսպի, սիսեռի, առվույտի և կորնգանի բարձր վերարտադրության սերմացուի արտադրական ծավալների ավելացում և տեղական արտադրության սերմացուների ինքնաբավության մակարդակի բարձրացում, սորտային կազմի ընդլայնում, մշակության արդյունավետության բարձրացում և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում, բարձր վերարտադրության սերմերի արտադրության ամբողջ գործընթացի նկատմամբ պետական վերահսկողության ապահովում | | | 195 000 000 ՀՀ դրամ |
| | | 111.2 Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում | Սորտափորձարկում անցած սերմերով ցանքատարածություններում սովորական ցանքատարածությունների նկատմամբ բերքատվության ավելացում 5-10%-ով, ցանքատարածությունների բուսասանիտարական վիճակի բարելավում, լավագույն սորտերի արտոնագրման, շրջանացման, օգտագործման թույլտվության արդյունքում նախկին սորտերի համեմատ բերքի քանակի ավելացում 5-10 %-ով, որակի էական բարելավում | | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 47 076 700 ՀՀ դրամ 2020թ.՝ 47 076 700 ՀՀ դրամ 2021թ.՝ 47 076 700 ՀՀ դրամ 2022թ.՝ 47 076 700 ՀՀ դրամ 2023թ.՝ 47 076 700 ՀՀ դրամ |
| 112. | Անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում, տոհմաբուծարանների ստեղծմանն աջակցություն | 112.1 Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականներին տավարաբուծության զարգացման ծրագրի իրականացում | Տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում, հանրապետությունում բուծվող խոշոր եղջերավոր կենդանիների ցեղայնության բարելավում և կատարելագործում, կաթի ու մսի արտադրության ծավալների ավելացում, տոհմասելեկցիոն աշխատանքների բարելավման միջոցով | | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 169 984 000 ՀՀ դրամ, 2020թ.՝ 320 490 667 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | տոհմային մատղաշների աճեցում, հանրապետությունում տավարաբուծության ճյուղի աստիճանական ինտենսիվացում | | | ՀՀ դրամ,<br><br>2021թ.՝<br>428 501 333<br>ՀՀ դրամ,<br><br>2022թ.՝<br>494 016 000<br>ՀՀ դրամ,<br><br>2023թ.՝<br>517 034 667<br>ՀՀ դրամ |
| | | 112.2 Թռչնաբուծության զար-գացման ծրագրի մշակում և իրականացում | Թռչնաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացում, թռչնամսի միավոր արտադրանքի ինքնարժեքի նվազում, թռչնամսի ներ-մուծման աստիճանական փոխարինում տեղական արտադրանքով | | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| | | 112.3 Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում | Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների (այսու-հետ՝ Կենդանիներ) համարակալման, հաշվառման և գրանցման համակարգի ներդրումը կնպաստի անաս-նաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսմանը, վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, պետա-կան պատվերի շրջանակներում հակա-համաճարակային միջոցառումների լիարժեք իրականացմանը, հիվանդու-թյունների կանխարգելմանը և անասնաբուժական վերահսկմանը նպաստելը, անասնաբուժական մթերքի որակի փորձաքննությանը և երկրի ներսում Կենդանիների տեղաշարժի վերահսկմանը, ինչպես նաև միջազգային ստանդարտներով սահ-մանված պահանջների ապահովմամբ՝ միջազգային շուկա մուտք գործելուն: | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (Համաձայնությամբ)<br><br>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին | 2020թ-ից Մինչև 2021թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| 113. | Կենդանիների և բույսերի հիվանդությունների | 113.1 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում | Վնասակար օրգանիզմների վնասակարության կանխում և դրանց | Մարզպետարաններ | Մինչև 2023թ. 4-րդ | ՀՀ պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրման ապահովում | | տարածման արեալի նվազեցում, գյուղատնտեսական հողատեսքերի բուսասանիտարական վիճակի բարելավում | | եռամսյակ | 2019թ.՝ 41 036.6 հազ. ՀՀ դրամ 2020թ.՝ 41 050.2 հազ. ՀՀ դրամ 2021թ.՝ 41 050.2 հազ. ՀՀ դրամ 2022թ.՝ 41 050.2 հազ. ՀՀ դրամ 2023թ.՝ 41 050.2 հազ. ՀՀ դրամ |
| | | 113.2 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում | Անասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովում, կենդանական ծագման հումքի և մթերքի որակի բարելավում, արտադրության ծավալների ավելացում | Մարզպետարաններ | Մինչև 2021թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 1 377 128.6 հազ. ՀՀ դրամ 2020թ.՝ 1 514 225.1 հազ. ՀՀ դրամ 2021թ.՝ 1 514 225.1 հազ. |
| | | 113.3 Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում | Դաբաղ հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում, ինչպես նաև թիրախային համայնքներում դաբաղ հիվանդության վիրուսի շրջանառության հայտնաբերում կամ բացառում | Մարզպետարաններ | Մինչև 2021թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 9 166.0 հազ. ՀՀ դրամ 2020թ.՝ 10 246.0 հազ. ՀՀ դրամ 2021թ.՝ 10 246.0 հազ. ՀՀ դրամ |
| 114. | Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնում և ագրոտուրիզմի | 114.1 Աջակցություն ոչ գյուղա-տնտեսական գործունեության զարգացմանն ուղղված միջոցա-ռումների իրականացմանը | Ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարողների եկա-մուտների մակարդակի բարձրացում, գյուղական բնակավայրերում ոչ գյուղա-տնտեսական ուղղվածության | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2021թ.-ից Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | զարգացում | | տնտեսությունների քանակի ավելացում | Մարզպետարաններ | | |
| | | 114.2 Գյուղական բնակավայրերում գինու զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում | Գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակի բարձրացում, կանանց և երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացում, համայնքների եկամուտների ավելացում | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Մարզպետարաններ<br><br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2020 թ-ից Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| 115. | Գյուղատնտեսական գիտելիքների և փորձի տարածման ու տեղեկատվության հասանելիության ապահովում | 115.1 Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում | Տնտեսավարողների տեղեկացվածության մակարդակի բարձրացում, փորձացուցադրական տնտեսությունների ստեղծում, խորհրդատվության որակի բարձրացում, 5 տարվա ընթացքում շուրջ 40000 գյուղատնտեսությունում տնտեսավարողների ուսուցում կամ վերապատրաստում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 116. | Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրում | 116.1 Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն, հետագայում պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա հիմնական ծրագրի իրականացում | Գյուղատնտեսությունում աղետների դեպքում վնասների հատուցման շնորհիվ տնտեսավարողների ռիսկերի մեղմում, ապահովագրվող մշակաբույսերի տարածքների ավելացում | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 500 մլն ՀՀ դրամ 2020թ.՝ 500 մլն ՀՀ դրամ 2021թ.՝ 500 մլն ՀՀ դրամ |
| 117. | Գյուղատնտեսության աջակցության հիմնական սկզբունքների, մեթոդաբանության և ռազմավարության սահմանում | 117.1 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում | Գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունների ընդլայնում, վարկերի մատչելիության մակարդակի բարձրացում, արդիական տեխնոլոգիաների ներդրում, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքներում գյուղատնտեսական գործունեության ակտիվացում | | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե 2019թ.՝ 2 194 037 710 ՀՀ դրամ 2020թ.՝ 2 151 037 710 ՀՀ դրամ 2021թ.՝ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2 151 037 710 ՀՀ դրամ 2022թ.՝ 2 151 037 710 ՀՀ դրամ 2023թ.՝ 2 151 037 710 ՀՀ դրամ |
| | | 117.2 Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովե-րամշակման ոլորտին տրա-մադրվող վարկերի տոկոսա-դրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում | Վերամշակողների և գյուղա-տնտեսությունում տնտեսավարողների միջև հումքի գնման պայմանագրային հարաբերությունների հաստատում, մթերվող պտուղբանջարեղենի, խաղողի և կաթի արժեքի վճարում կարճ ժամկետում, արդյունքում՝ հումքի իրացման կայուն երաշխիքների առկայություն, թողարկվող պատրաստի արտադրանքի ինքնարժեքի նվազում՝ 5-ից 7 տոկոսով | | Մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե՝ 2019թ.՝ 998 901 408 ՀՀ դրամ, 2020թ.՝ 998 901 408 ՀՀ դրամ, 2021թ.՝ 998 901 408 ՀՀ դրամ, 2022թ.՝ 998 901 408 ՀՀ դրամ, 2023թ.՝ 998 901 408 ՀՀ դրամ |
| | | 117.3 Հայաստանի Հանրա-պետության գյուղատնտեսու-թյան ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակում | - բարելավել նախարարության կարողությունները՝ ստեղծելու, իրականացնելու և վերահսկելու քաղաքականությունը,<br>- հողային շուկայի զարգացում,<br>- գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացում,<br>- գյուղատնտեսական կայունություն և ռիսկերի նվազեցում: Նախատեսված միջոցառումների իրականացմամբ գյու-ղատնտեսական համախառն արտադ-րանքի կրկնակի աճի ապահովում՝, տարեկան միջինը՝ 6.1 %-ով, աշխա-տուժի արտադրողականության բարձրացում, տնտեսությունների եկամուտների ավելացում | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>Մարզպետարաններ | 2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |

| Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 118. | Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում | 118.1 Մշակել ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ զարգացման ուղիները | Փաստաթղթով կնախանշվեն էներգետիկ համակարգի զարգացման ուղիները՝ 2020-2040թթ համար: | ՀԾԿՀ /համաձայնությամբ/ | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելվող այլ միջոցներ /USAID ֆինանսավորմամբ/ Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 8 մլն դոլար |
| | | 118.2 Մշակել Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագիր | Ծրագրով կնախանշվեն էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ տասնամյա ժամանակաշրջանի համար: | | 2021 թվականի հուլիս 3-րդ տասնօրյակ | |
| | | 118.3 «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի մշակմամբ կկատարելագործվի իրավական դաշտը: | | 2022 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 119. | Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում | 119.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ավարտական փուլի աշխատանքները | Կապահովվի Հայկական ԱԷԿ-ի արդյունավետ և անվտանգ աշխատանքը, ինչպես նաև շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում առաքվող հզորությունը կավելանա առնվազն 10%-ով: | | 2019 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար ՀՀ կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ր<br><br>Առկա պլանավորված ֆինանսավորման միջոցների չափը՝<br>300 մլն ԱՄՆ դոլար՝ որից՝ վարկ՝<br>270 մլն դոլար, դրամաշնորհ՝<br>30 մլն դոլար |
| 120. | Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում | 120.1 Միջուկային էներգետիկական միջազգային շուկայում առկա նոր միջուկային էներգաբլոկների առաջարկների և ՀՀ էներգահամակարգում դրանց կիրառելիության առավել արդյունավետ տարբերակի ընտրություն | ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցմամբ կապահովվի ՀՀ էներգետիկ անկախությունն ու կբարձրացվի ՀՀ էներգահամակարգի անվտանգությունը, կպահպանվի ՀՀ էներգահամակարգի դիվերսիֆիկացումը: | | 2019-2020 թվականներ | Ֆինանսավո-րում չի պահանջվում |
| | | 120.2 Հնարավոր ներդրողների և մատակարարների հետ բանակցությունների վարում | | | 2020-2022 թվականներ | |
| | | 120.3 ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում | | | 2020 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 121. | Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում | 121.1 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացում | Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: | | 2019 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Վարկային միջոցներ, /<br>ֆինանսավորող՝ Իրանի արտահանման զարգացման բանկ (ԻԱԶԲ) և Սանիր Ինտերնեյշնլ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 121.2 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ | Արդյունքում՝ Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի: | | 2020 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՖՁԵ ընկերություն/ Առկա պլանավորված ֆինանսավորման չափը՝ Ծրագրի արժեքը կազմում է՝ 107.9 մլն եվրո վարկ |
| | | 121.3 Շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը | | | 2020-2021 թվականներ | |
| 122. | Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկ | 122.1. 220 կՎ և 400 կՎ ենթակայանների և օդային գծի կառուցման մրցութային գործընթացի մեկնարկ | Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Առաջին փուլի արդյունքում՝ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից կհասցվի 350 ՄՎտ-ի: | | 2019-2020 թվականներ | Վարկային և դրամաշնորհային միջոցներ /Գերմանիայի զարգացման վարկերի KfW բանկ, Եվրոպական Ներդրումային Բանկ, Եվրամիության Հանձնաժողովի Հարևանության Ներդրումային Գործիքի (“NIF”) շրջանակներում/<br><br>Առկա պլանավորված ֆինանսավորման չափը՝ կնքվել են 188.2 մլն |
| | | 122.2. 220 կՎ և 400 կՎ ենթակայանների և օդային գծի կառուցման մեկնարկ և ավարտ | | | 2020-2023 թվականներ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | եվրոյի վարկային և դրամաշնորհային համաձայնագրեր, այդ թվում՝ վարկ՝ 178.2 մլն եվրո, դրամաշնորհ՝ 10 մլն եվրո |
| 123. | Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում | 123.1 Արևային համակարգային կայանների կառուցման ծրագրի իրականացման նպատակով Մասրիկ տեղանքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ապահովում | Էներգետիկ համակարգում կստեղծվեն նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ շուրջ 415 ՄՎտ գումարային հզորությամբ սեփական վերականգնվող ռեսուրսների կիրառմամբ արտադրական նոր կայաններ, որոնք զգալիորեն կթեթևացնեն էներգետիկ համակարգում գործող արտադրական հզորությունների բեռը՝ ապահովելով էներգետիկ համակարգի դիվերսիֆիկացման ուղիները: Այսպիսով զգալիորեն նպաստելով 2019 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության №65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2 մասում ներառված նպատակադրումը՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմները և թողունակությունը գնահատելով՝ կիրականացվեն արևային համակարգային կայանների մրցութային եղանակով կառուցման ծրագրեր՝ մինչև 2022 թվականը ներքին սպառման կառուցվածքում այդ կայանների կշիռը հասցնելով առնվազն 10 տոկոսի»: | | 2019-2020 թվականներ | Մասնավոր ներդրումներ և օրենքով չարգելվող այլ միջոցներ<br><br>Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 60 մլն դոլար |
| | | 123.2 Տարբեր փուլերով գումարային մոտ 60 ՄՎտ հզորությամբ ևս 5 արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանների կառուցման ծրագրերի իրականացում | | | 2020-2022 թվականներ | Մասնավոր ներդրումներ և օրենքով չարգելվող այլ միջոցներ<br><br>Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 60 մլն դոլար |
| | | 123.3 Աջակցել գումարային մոտ 300 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերի իրականացման և ներդրումային | | | 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Մասնավոր ներդրումներ և օրենքով չարգելվող այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ծրագրերի հաստատման գործընթացներին | | | | Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 300 մլն դոլար |
| 124. | Օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում ստանձնած միջազգային պարտավորություններին | 124.1 էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգերի ուժը կորցրած ճանաչելու և էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության նոր կանոնների ու պահանջների մշակում | էներգետիկայի բնագավառի և էներգախնայողությանն ուղղված նորմատիվ իրավական ակտերի, այդ թվում՝ էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության կանոնների ու պահանջների մշակում, ինչպես նաև ներկրվողածխաջրածնային էներգակիրներին այլընտրանք հանդիսացող սեփական վերականգնվող էներգառեսուրսների կիրառմանն ուղղված նորմատիվային բազայի կատարելագործում՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ օրենսդրությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին: | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2019թ. շարունակական | Օրենքով չարգելվող այլ միջոցներ<br><br>Նախատեսվում է բանակցություններ դոնոր կազմակերպությունների հետ<br><br>Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ նախնական գնահատումներով շուրջ 300 հազ. դոլար |
| | | 124.2 Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առավելագույն և արդյունավետ օգտագործմանն և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված նոր նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում | | | | Օրենքով չարգելվող այլ միջոցներ<br><br>Ընթանում են բանակցություններ ԵՄ հետ<br><br>Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ նախնական գնահատումներով շուրջ 30 մլն եվրո |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 125. | Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2021-2030 թվականների ազգային ծրագրի մշակում | 125.1 Ազգային նոր ծրագրի մշակման աշխատանքների իրականացում | Ազգային ծրագրով 2021-2030 թվականների համար կսահմանվեն նոր ճյուղային միջոցառումներ և թիրախներ, որոնք կօժանդակեն ՀՀ էներգախնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացման կոնկրետ քայլերի որոշակիացմանը: | | 2020-2021 թվականներ | Օրենքով չարգելվող այլ միջոցներ Նախատեսվում է բանակցություններ դոնոր կազմակերպությունների հետ Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ նախնական գնահատումներով շուրջ 300 հազար եվրո |
| 126. | Էներգախնայողական պետական գնումների իրականացում | 126.1 «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Կսահմանվեն պետական կարիքների ապահովման նպատակով ձեռքբերվող ապրանքատեսակների էներգաարդյունավետության պահանջներ: | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 126.2 «Պետության կարիքների համար ձեռք բերվող էներգասպառող սարքերի և սարքվածքների էներգաարդյունավետության պահանջների սահմանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ | Օրենսդրական փոփոխություններից հետո ՀՀ կառավարության կողմից կսահմանվի էներգասպառող սարքերի և սարքվածքների էներգաարդյունավետության պահանջները: | | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 127. | Հանքարդյունաբերության ոլորտի զարգացում | 127.1 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման | Հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական գնահատում, որը կկանխորոշի մշակվող | | 2019թ. հուլիսի 3-րդ | Համաշխարհային բանկի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | նպատակով «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ախտորոշիչ ուսումնասիրությունների իրականացում | ռազմավարությունում տրվող ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները: | | տասնօրյակ | կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ 110 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| | | 127.2 Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակում | Հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության սահմանում, ազգային և տեղական մակարդակներում ֆիսկալային և ոչ ֆիսկալային (այդ թվում՝ վերամշակման և վերջնական արտադրանքի ստացման) օգուտները ավելացնելու և բաշխելու համար ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում, համաչափ զարգացման, տնտեսական, բնապահպանական և սոցիալական հարցերի ուղղությամբ ընդհանուր մոտեցման ամրագրում: | | 2020թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ 200 հազ.ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| | | 127.3. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող իրավական այլ ակտերի մշակում և ինստիտուցիոնալ կարգավորումների իրականացում | Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման ապահովում | | 2021-2023 թվականներ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 128. | ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների | 128.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ | Հիմք կդրվի առավել թափանցիկ, հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծմանը, ինչը խթան կհանդիսանա կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության կայացմանը | | 2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական) | տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում | | | | Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 80 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| | | 128.2 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում | | | | |
| 129. | Ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի կոորդինատների ճշգրտում | 129.1 ՀՀ տարածքում գործող WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգին համահունչ ընդերքի տեղամասերի կոորդինատների փոփոխության իրականացում | Ընդերքի տեղամասի կոորդինատների անճշտությունների և ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողհատկացման խոչընդոտների վերացում: | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին,<br><br>Անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 2020 թ. դեկտեմբեր 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 73 000 հազ. ՀՀ դրամ |
| 130. | Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների տրամադրման իրավական կարգավորում | 130.1 ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում | Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի հետ փոխկապակցված մեխանիզմի ներդրում | Անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 2022թ. դեկտեմբեր 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 131. | Իրական սեփականատերերի ռեգիստրի ներդրում | 131.1 ՀՀ ընդերքի մասին օրենսգրքից և հարակից օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում | Իրական սեփականատերերի ռեգիստրի վարման ընթացակարգի սահմանում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| | | 131.2 Իրական սեփականատերերի էլեկտրոնային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում | Համապատասխան տեխնիկական առաջադրանքով էլեկտրոնային հարթակը մշակող ընկերության ընտրության մրցույթի հայտարարություն և անցկացում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի դրամաշնորհ 15 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | դրամ |
| 132. | Թույլտվությունների տրամադրման պարզեցված համակարգի ներդրում | 132.1 «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում | Ընդերքօգտագործման թույլտվության առավել պարզ տրամադրման գործընթացի ապահովում առանձին, հատկապես պետական նշանակության ծրագրերի իրականացման դեպքում | | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 133. | Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակում | 133.1 «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ընդերքօգտագործման պայմանագրերի թվայնացում | Օրենսդրական պահանջի սահմանումից հետո թվայնացված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակում լիազոր մարմնի կայքում | | 2020թ դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ. | Ֆինանսավորում չի պահանջում |
| 134. | Ոլորտի ֆինանսական եկամուտներից համապատասխան համայնքներին հատկացումների ապահովում | 134.1 Հանքարդյունաբերության ոլորտի ֆինանսական եկամուտներից համապատասխան համայնքներին հատկացումների ապահովման նպատակով օրենսդրական նախագծի մշակում | Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից վճարվող ռոյալթիներից համայնքներին տարեկան հատկացման մեխանիզմի ներդրում | | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 135. | Բնապահպանական հարկերից համայնքների մասհանման մեխանիզմի հստակեցում | 135. 1 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | Մետաղական հանքաքար արդյունահանելու թույլտվություն ունեցող բոլոր ընկերությունների ընդգրկում համապատասխան կարգավորման միջոցով, ինչպես նաև համայնքների կողմից կատարողական հաշվետվությունների պահանջի սահմանում | | 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 136. | Պետության կողմից երկրաբանական տեղեկատվության համակարգված վարման և վերլուծության իրականացում | 136.1 «2002 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՀ կառավարության N 1758-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում | Ֆոնդի լրացուցիչ գործառույթների սահմանման միջոցով վերջինիս կողմից պարբերաբար կվերլուծվեն և կկազմվեն երկրաբանական համակարգված տվյալներ/հաշվետվություններ՝ ըստ սահմանված գործոնների (իրավունքով ծանրաբեռնվածությունը ըստ տարածաշրջանների, օգտակար հանածոների, նրանց փոփոխությունն | | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ տարիների, պաշարների քանակական շարժն ըստ տարիների, հանքավայրերի համակարգումն ըստ մարզերի և այլն), ինչպես նաև ձևավորել պաշարների հետագա տրամադրման, տարածաշրջանների ներուժի ոլորտի կառավարման և այլ հարցերի հետ կապված առաջարկություններ | | | |
| 137. | Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրները լուծելու, ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովում, պետություն-մասնավոր գործընկերության սկզբունքով առաջնորդվելով ոլորտի զարգացմանն ուղղված հետևողական աշխատանքների իրականացում, մասնավորապես նաև վարձակալության գործող պայմանագրով նախատեսված միջոցառումների և թիրախային ցուցանիշների ապահովում | 137.1 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում: Կատարված ուսումնասիրություններից ելնելով, ըստ առաջնահերթության չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում | Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում | | 2019-2023 թվականներ | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ Ըստ համապատասխան ներդրումների առկայության |
| | | 137.2 ՀՀ հինգ մարզերում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության խնդիրների լուծման նպատակով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում: Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների շինարարությունների իրականացում | Ջրագծերի վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացմամբ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների շարունակական բարելավում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում, կորուստների նվազեցում, անխափան ջրամատակարարում: Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացում և կառուցում | | 2019-2020 թվականներ | ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն /ՀՆԾ միջոցների հաշվին Ընդհանուր արժեքը՝ 82446.4.0 հազ Եվրո (այդ թվում՝ 56705.3 հազ.Եվրո վարկ և 12000.0 հազ |
| | | 137.3 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | բարելավման աշխատանքների իրականացում և շահագործում: | | | | Եվրո դրամաշնորհ, 13741.1 հազ Եվրո համաֆինանսավորում: 2019թ. նախատեսվել է՝ ընդամենը 9005.8 հազ. Եվրո, (այդ թվում՝ 3251.1 հազ.Եվրո վարկ և 3290.4 հազ Եվրո դրամաշնորհ, 2464.3 հազ Եվրո համաֆինանսավորու): |
| | | 137.4 Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների ջրամատակարարման բաշխիչ ցանցերի տեխնիկական բարելավման աշխատանքների իրականացում | Երևան քաղաքում ջրամատակարարման ծառայությունների բարելավում: | | 2019-2020 թվականներ | ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն / ՀՆԾ միջոցների հաշվին Ընդհանուր արժեքը՝ 27561.1 հազ.դոլար (այդ թվում՝ 14000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հազ.դոլար վարկ և 7665.0 հազ դոլար դրամաշնորհ, 5896.1 հազ դոլար համաֆինանսավորմամբ) 2019թ. նախատեսվել է՝ ընդամենը 11350.7 հազ.դոլար, (այդ թվում՝ 4152.6 հազ.դոլար վարկ և 3994.3 հազ դոլար դրամաշնորհ, 3203.8 հազ դոլար համաֆինանսավորմամբ) |
| 138. | Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման իրավիճակի գնահատում | 138.1 Կոմունալ կենցաղային կեղտաջրերը մաքրումից հետո դրանց համապատասխանությունը ջրերի ստանդարտներին: | Բաց գետավազան թափվող կոյուղաջրերի լիարժեք մաքրության ապահովում և համապատասխանեցում տվյալ գետի ջրի ստանդարտներին: | | 2023 թվական | Միջազգային դոնոր կազմակերպություններ |
| | | 138.2 Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման առաջին փուլի կառուցվածքների շահագործման ապահովում, կայանի վերակառուցման ծրագրի երկրորդ փուլի՝ տիղմի օգտահանման կառուցվածքների շինարարության նախապատրաստական աշխատանքների մեկնարկ | Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների բարելավում | | 2019-2023 թվականներ | Վարկային և դրամաշնորհային միջոցների ներգրավմամբ Ըստ համապատասխան ներդրումների առկայության |
| | | 138.3 Կեղտաջրերի հեռացման բնագավառի հայեցակարգային մոտեցումների մշակում և | Արդիականացված հայեցակարգային մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան բարելավել քաղաքային | | 2019 թվականի օգոստոսի 3- | Օրենքով չարգելված այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | առաջարկությունների ներկայացում | կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացումը | | րդ տասնօրյակ | |
| 139. | Ոռոգման ոլորտում իրականացնել անհրաժեշտ կառուցվածքային բարեփոխումներ՝ նպատակ ունենալով շարունակաբար նվազեցնել ջրի կորստի ցուցանիշները և ավելացնել համակարգում հավաքվող եկամուտները | 139.1 Ոռոգման համակարգի զարգացման տեսլականի ներկայացում | Ոռոգման համակարգի զարգացման հեռանկարային ուղիների ամրագրում | | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 139.2 Ոռոգման համակարգի զարգացման հայեցակարգի մշակում և առաջարկությունների ներկայացում | Ոռոգման համակարգի ընթացիկ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության թարմացում և գոյություն ունեցող ոռոգվող տարածքների ֆինանսական, տնտեսական և ջրային առանձնահատկությունների խորը ուսումնասիրություն (ջրի հոսքեր և օգտագործում, ակտիվների վիճակ, ֆինանսական դրություն, ՇևՊ գործընթացներ) | | 2020 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 139.3 «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների իրականացում | Մատուցվող ծառայությունների որակի բարելավում և գործունեության արդյունավետության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում | | 2021 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 139.4 ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման տեսլականի ներկայացում | ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման ուղիների ամրագրում | | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 139.5 ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման նպատակով կառավարման բարելավման պլանների կազմում, կոնկրետ գործողությունների պլանների մշակում և իրականացում | Մատուցվող ծառայությունների որակի բարելավում և գործունեության արդյունավետության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում | | 2022 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 140. | Իրականացնել ոռոգման մեխանիկական համակարգերը ոռոգման ինքնահոս համակարգերով | 140.1 «Ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի իրականացում | Մեխանիկական ոռոգումը ինքնահոս համակարգերով փոխարինում, որոշ մայր ջրանցքների և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում: ՋՕԸ-երի | | 2019-2021 թվականներ (ծրագիրը մեկնարկել է | ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսա |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փոխարինելու քաղաքականություն | | ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում: | | 2016 թվականին) | ավորման միջոցներ Եվրասիական զարգացման բանկ Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 50000.0 հազ.դոլար (այդ թվում՝ 40000.0 հազ.դոլար վարկ և 10000.0 հազ.դոլար համաֆինանսավորում 2019թ. նախատեսվել է՝ ընդամենը 3145.7 հազ.դոլար, (այդ թվում՝ վարկային միջոցներ 2315.0 հազ.դոլար, 830.7 հազ.դոլար համաֆինանսավորում |
| | | 140.2 «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի իրականացում | Չորս ջրանցքների վերանորոգման աշխատանքներ, 8 մեխանիկական համակարգերի փոխարինում ինքնահոսով, ՀՀ 99 համայնքների ներտնտեսային ցանցի վերականգնում: | | 2019 թվական (ծրագիրը մեկնարկել է 2013 թվականին) | ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Համաշխարհային բանկ Ծրագրի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ընդհանուր արժեքը՝ 40000.0 հազ.դոլար (այդ թվում՝ 32000.0 հազ.դոլար վարկ և 8000.0 հազ.դոլար համաֆինանսավորում) 2019թ. նախատեսվել է՝ ընդամենը 1166.5 հազ.դոլար, (այդ թվում՝ վարկային միջոցներ 844.9 հազ.դոլար 321.6 հազ.դոլար համաֆինանսավորում |
| 141. | Ջրամբարաշինության ծրագրերի հեռանկարային զարգացման քաղաքականության մշակում | 141.1 Ջրամբարաշինության և պաշարների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում և առաջարկությունների ներկայացում | Մակերևութային ջրերի հոսքի կառավարման և ամբարման հայեցակարգային մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան բարելավել ջրային պաշարների կառավարումը | | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 142. | 2019-2023 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում | 142.1 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1; Կապսի ջրամբարի կառուցում | Մակերևութային ջրերի հոսքի կառավարում և ամբարում: Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում | | 2019-2022 թվականներ (ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին) | ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Գերմանիայի զարգացման վարկերի բանկ Ծրագրի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ընդհանուր արժեքը 62400.0 հազ.եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ 50000.0 հազ.եվրո, 2000.0 հազ. Եվրո դրամաշնորհ և 10400.0 հազ.եվրո համաֆինանս ավորում 2019թ. նախատեսվել է՝ ընդամենը 4366.9 հազ. Եվրո, (այդ թվում՝ վարկային միջոցներ 3961.2 հազ. Եվրո 405.7 հազ.եվրո համաֆինանս ավորում |
| | | 142.2 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2; ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում | Ոռոգման ջրի տեղափոխում, Ջրօգտագործողներին մատակարարում | | 2019-2022 թվականներ | ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանս ավորման միջոցներ Գերմանիայի զարգացման վարկերի բանկ Ծրագրի ընդհանուր արժեքն է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 22200.0 հազ. Եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ 18500.0 հազ. Եվրո և 3700 հազ. Եվրո համաֆինանսավորում) 2019թ. նախատեսվել է՝ ընդամենը 640.5 հազ. Եվրո, (այդ թվում՝ վարկային միջոցներ 533.7 հազ. Եվրո 106.8 հազ.Եվրո համաֆինանսավորում |
| | | 142.3 Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում:<br>Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ: | Մակերևութային ջրերի հոսքի կառավարում: Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում | | 2019-2022 թվականներ<br><br>(ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին) | ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցություն Ծրագրի ընդհանուր արժեքն է՝ 90003.63 հազ. Եվրո (այդ թվում՝ վարկային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 232.3 Ապաստան հայցողների համար նախատեսված ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցում, կահավորում | 2019թ. կիրականացվեն կենտրոնի շինարարության նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի կազմման աշխատանքները, որի համար դրամաշնորհային միջոցներ կտրամադրվի ԵՄ կողմից ՄՔԶՄԿ հայաստանյան գրասենյակի միջոցով: 2019թ. կսկսվեն, 2020թ. կշարունակվեն և 2021թ. կավարտվեն կենտրոնի շինարարության աշխատանքները;<br>Դրամաշնորհային միջոցները կտրամադրվեն Դանիայի և Հոլանդիայի կառավարությունների կողմից համապատասխանաբար 430416,0 և 215208,0 հազար դրամի չափով:<br>2021թ. նոր կենտրոնը կկահավորվի ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից տրամադրված 38436,8 հազար դրամ դրամաշնորհային միջոցների հաշվին:<br><br>Կկառուցվի և կկահավորվի ապաստան հայցողների համար ժամանակավոր տեղավորման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան | Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)<br>ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ) | 2021թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենտրոն<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 684060,8 հազար դրամ: | | | |
| 233 | Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման միասնական քաղաքականության մշակում | 233.1 «Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման միասնական քաղաքականության ռազմավարության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Կամբողջացվի Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման ուղղությամբ պետության կողմից վարվող քաղաքականությունը:<br>Փաստաթուղթը կունենա գործողությունների երեք ծրագիր՝ առաջինն ուղղված Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների, երկրորդը ՀՀ- ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների, երրորդը՝ սիրիահայերի ինտեգրմանը;<br>Ռազմավարության մշակման նպատակով տեղացի փորձագետ ներգրավելու համար անհրաժեշտ դրամաշնորհային միջոցները կտրամադրի Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), իսկ միջազգային փորձը ներկայացնող միջազգային փորձագետի համար՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը (OSCE ODHIR): | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, Գերմանիայի միջազգային համագործակցությա ն ընկերություն (համաձայնությամբ) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (համաձայնությամբ) | 2020թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 234 | Դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված իմիգրացիոն ամբողջական քաղաքականության մշակում | 234.1«Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2020-2021 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության լրկալ որոշման նախագծի մշակում և ներկայացում վարչապետի աշխատակազմ | Կվերանայվի Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 ռազմավարությունը և այն կլրացվի իմիգրացիոն քաղաքականությանը վերաբերող նոր ուղղությամբ: Կհաստատվեն Հայաստան մուտք գործող օտարերկրացիների ազատ և անվտանգ տեղաշարժը ապահովող՝ երկրի ազգային անվտանգության պահպանման շահերի հետ հավասարակշռված քաղաքականության հիմնադրույթները; ՄՔԶՄԿ հայաստանյան գրասենյակը դրամաշնորհային միջոցներ կհատկացնի նախագծի մշակման նպատակով փորձագետ վարձելու համար: | ՀՀ կրթության և գիտության նախա-րարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն,ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Միգրացիոն քաղաքականության միջազգային կենտրոն (համաձայնությամբ) | 2020թ. հունիսի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 234.2 «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2020-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության լրկալ որոշման նախագծի մշակում և ներկայացում վարչապետի | Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը լրացված է դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված կոնկրետ գործողություններով: | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախա-րարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և | 2020թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատակազմ | | սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | | |
| 235 | Արտագնա աշխատանքի մեկնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով, մուտքի երկրների պատկան մարմինների հետ համագործակցության հաստատում, ներգրավելով այդ երկրներում գործող սփյուռքի կառույցները | 235.1 ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում՝ մուտքի, այդ թվում ԵԱՏՄ անդամ պետությունների միգրացիոն օրենսդրության վերաբերյալ | Կոնկրետ երկրների վերաբերյալ կողմնորոշման միջոցառումների կազմակերպման միջոցով արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացիները նախապատրաստված կլինեն դիմակայելու միգրացիոն գործընթացում գործնականում հանդիպող իրավական, սոցիալական, մշակութային և հոգեբանական բնույթի մարտահրավերներին:<br>Ծրագրի իրականացման համար դրամաշնորհային միջոցները կտրամադրվեն Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ) | 2020թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 235.2 ՀՀ-ի համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող պետություններին առաջարկությունների | Օժանդակություն կցուցաբերվի զարգացման նպատակ հետապնդող բնակչության տեղաշարժերին, ինչը կնպաստի Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիոն հոսքի կանխարգելմանը և դրա | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի | 2022թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացում աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության հարցերով միջպետական համաձայնագրերի կնքման նպատակով | վերափոխմանը օրինական շրջանառու միգրացիոն հոսքի: | նախարարություն | | |
| 236 | Հետվերադարձի (ռեադմիսիայի) գործընթացների արդյունավետ կազմակերպման շարունակում՝ այդ բնագավառում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան | 236.1 ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի կիրարկման արձանագրությունների ստորագրման հարցի շուրջ բանակցությունների վարում ԵՄ անդամ պետությունների հետ | Համաձայնագրի կիրարկման արձանագրություններ կստորագրվեն Չեխիայի, Բուլղարիայի, Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Շվեդիայի, Գերմանիայի հետ: Ընթացք կտրվեն արձանագրությունների ստորագրման վերաբերյալ ԵՄ այլ պետություններից ստացվող առաջարկներին: | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2023թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 236.2 Ռեադմիսիայի էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջականացում՝ ընդլայնելով այդ համակարգով աշխատող երկրների թիվը | Կավելանա ռեադմիսիոն հայցերը ռեադմիսիայի էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով ուղարկող երկրների թիվը: Ներկայումս համակարգին միացած երեք երկրներին ՝ Գերմանիա, Նիդեռլանդներ, Լեհաստան կգումարվեն ևս 6-7 ԵՄ պետություններ: | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 237 | Միգրանտների, այդ թվում՝ վերադարձող միգրանտների, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների տնտեսական և մարդկային ներուժի օգտագործման համար պայմանների ստեղծում՝ միգրացիայի դրական ազդեցություններն | 237.1 Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ միգրանտների, այդ թվում՝ վերադարձած, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների ներդրումների համար համահավասար ֆինանսավորմամբ փորձնական ծրագրերի մշակում և | Միգրանտների տնտեսական և մարդկային ներուժը մոբիլիզացված և օգտագործված է Կիրականացվի «Միգրանտները վերադառնում և գործում են. 1+1» ծրագիրը: Ծրագրի շնորհիվ միգրանտները, այդ թվում՝ վերադարձած, ինչպես նաև աշխատանքային միգրանտները և նրանց ընտանիքների անդամները, հյուրընկալ երկրում կուտակած իրենց ֆինանսական ռեսուրսների և դոնոր | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | 2021թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | առավելագույնս օգտագործելու և դրանք երկրի տնտեսության զարգացմանը ծառայեցնելու նպատակով | իրականացում | կազմակերպությունից ստացած համահավասար ֆինանսավորմամբ հնարավորություն կստանան սկսելու փոքր կամ միջին բիզնես իրենց համայնքներում, ինչի շնորհիվ կապահովվի արտերկրում բնակվող աշխատանքային միգրանտների հմտությունների, մտավոր ներուժի, փորձի և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը Հայաստանում: Ծրագրի իրականացման համար դրամաշնորհային միջոցները կտրամադրվի ԵՄ-ի կողմից 2019թ. տարեկան գործողությունների ծրագրի (EEP) ֆինանսավորման շրջանակներում: | ՀՀ կրթության և գիտության նախա-րարություն | | |
| | | 237.2 Միգրանտների կողմից Հայաստանի համայնքներում կատարած ներդրումների հաջողված պատմությունների ներկայացում պետական մարմինների կայքէջերի, սոցիալական ցանցերի և տեղեկատվական այլ միջոցներով | Հասարակությունը, վերադարձող, ինչպես նաև աշխատանքային միգրանտները տեղեկացված են Հայաստանում ներդրում կատարած միգրանտների հաջողված պատմությունների մասին | | 2023թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 238 | Պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության թվայնացման, միասնական և համապարփակ տեղեկատվական շտեմարանների ձևավորման, պետական | 238.1 Հայաստանի Հանրապե-տության արխիվային հավա-քածուի փաստաթղթերի ցուցակների թվայնացում և տեղադրում համացանցում | 1.Միասնական տեղեկատվական դաշտ ստեղծում և քաղաքացիների իրավունքը արխիվային փաստաթղթերի՝ որպես Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական պաշարների բաղ-կացուցիչ մաս, օգտագործման ապահովում,<br>2. Քաղաքացիների հնարավորություն կունենան Հայաստանի Հանրապետու-թյան արխիվային հավաքածուի կազմի և բովանդակության վերաբերյալ | | 2019-2023թթ շարունակական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տեղեկատվական ծրագրերի համաժամանակեցման իրականացում, տեղեկատվական համակարգերի փոխադարձ համալրում և ռացիոնալ օգտագործում | | համակարգված տեղեկությունը որոնել, դիմել և ստանալ առցանց համա-կարգով,<br>3.Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի տեղեկատ-վական կարողությունների զարգացում: | | | |
| **Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | | | | | | |
| 239 | «Զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող քաղաքացիների հմտությունների զարգացում, քաղաքացիների ստեղծարար ներուժի, գործարար կարողություն-ների, աշխատանքային ունակությունների ընդլայնման աջակցություն և նորագույն տեխնոլոգիաների կիրառության խրախուսում, ՓՄՁ սուբյեկտների ֆինանսների հասանելիության բարձրացում | 239.1 Գործարար խորհրդա-տվության ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝<br>- սկսնակ գործարարների համար «Հաջող սկիզբ» ծրագրի իրականացում<br>- գիտելիքային առցանց հարթակի մշակում և գործարկում<br>- ձեռնարկատիրությանն առնչվող թեմատիկ ուսուցողական և պարզաբանող տեսանյութերի պատրաստում և տարածում<br>- գործարար ծրագրի մշակման առցանց գործիքի ներդրում<br>- օրինակելի բիզնես մոդելների և ձեռնարկների մշակում ու տարածում<br>- ձեռնարկատիրությանն առնչվող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում | - Մինչև 300 շահառու կմասնակցի ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացին, որից առնվազն 150-ը կմշակեն իրատեսական գործարար ծրագրեր<br>- Կմշակվեն և առցանց հասանելի կլինեն 6-8 ձեռնարկատիրությանն առնչվող թեմատիկ ուսուցողական և պարզաբանող տեսանյութեր<br>- Կներդրվի գործարար ծրագրի մշակման առցանց գործիք<br>- Կմշակվեն 4-5 օրինակելի բիզնես ձեռնարկներ | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 183120.0 հազար դրամ Դրամաշնորհային միջոցներ |
| | | 239.2 Շուկաների հասանելիության և միջազգայնացման կարողությունների զարգացման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ | - Առնվազն 50 շահառուների բիզնես առաջարկները հասանելի կլինեն ավելի քան 60 երկրների գործարարներին՝ ապահովելով ավելի քան 100 համագործակցության հետաքրքրության առաջարկների | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 183120.0 հազար դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | - աջակցություն Ձեռնարկութ-յունների եվրոպական ցանցի գործունեության շրջանակներում<br>- նորարարական կարողություն-ների զարգացման նպատակով աջակցության նոր մեխանիզմների մշակում և ներդրում<br>- աջակցություն նորարական ՓՄՁ-ներին՝ դիմելու ԵՄ ֆինանսավորման Հորիզոն 2020 ծրագրի ՓՄՁ գործիքի ներքո<br>- աջակցություն «ԷՐԱՍՄՈՒՍ երիտասարդ ձեռնարկատերե-րի» փոխանակման ծրագրի ներքո<br>- ԵՄ տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում Ճամփեզրյա կայանի կառուցում և գործարկում | ստացում<br>- Միջազգայնացման միջոցառումներին առնվազն 20 շահառուների մասնակցություն<br>- Առնվազն 10 շահառուներ կկնքեն համագործակցության համաձայնա-գրեր և ընդլայնեն միջազգային համագործակցությունը<br>- Առնվազն 10 շահառուներ կբարելավեն իրենց նորարարական կառավարման հմտությունները<br>- Նորարարական ՓՄՁ-ների աջակցության մշակված նոր մեխանիզմ<br>- Առնվազն 10 իրականացված փոխանակման ծրագրեր<br>- Առնվազն 30 ՓՄՁ-ներ կընդլայնեն վաճառքի ծավալները Ճամփեզրյա կայանի գործարկման արդյունքում | | | Դրամաշնորհային միջոցներ |
| | | 239.3 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսների հասանելիության ապահովման միջոցառումներ, այդ թվում՝<br>- սկսնակ գործարարներին վարկային երաշխավորություն-ների տրամադրում<br>- վարկերի դիմաց 3 տարի և ավել գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում<br>- Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի դրամագլխի ռիսկերի կառավարման նոր համակարգի ներդրման միջոցով շահառուների թվաքանակի և ֆինանսական | - Սկսնակ բիզնեսների վարկի 100 երաշխավորություն<br>- Գործող բիզնեսների վարկի երաշխավորություն 20<br>- Լիզինգի երաշխավորության նոր գործիք<br>- շրջանառու միջոցների համալրման գործիք | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի վարկային երաշխավորությունների դրամագլուխ<br><br>Դրամաշնորհային միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | աջակցության ծավալների ընդլայնում<br>- լիզինգով ձեռք բերվող գույքի կանխավճարի գումարի մասնակի կամ ամբողջական երաշխավորում | | | | |
| 240 | ՓՄՁ ոլորտում խոչընդոտների վերացում՝ ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կայացման, ՓՄՁ կարողությունների զարգացման ճանապարհով ՓՄՁ խոշորացման խթանների համակարգի զարգացում, | 240.1 «ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | ՓՄՁ ոլորտում միջնաժամկետ քաղաքականության օրակարգի ձևավորում, պետական աջակցության ծրագրերի և գործիքակազմերի նույնականացում, շահառուների միջև համագործակցության արդյունավետ հարթակների ձևավորում | - | 2019 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության տեխնիկական աջակցություն |
| | | 240.2 «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի N 1281-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | ՓՄՁ զարգացման խորհրդի և ենթա-խորհրդի ձևաչափի և կազմի փոփո-խության արդյունքում Խորհուրդը և ենթախորհուրդը հարթակ կդառնան նաև ՓՄՁ և խոշոր կազմակերպություն-ների համագործակցության հնարա-վորությունների բացահայտման և դրանց խորացման համար | - | 2019 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 241 | Մասնավոր հատվածում արտադրողականության բարձրացմանն ուղղված ծրագրային նախաձեռ-նությունների խրախուսում | 241.1 Թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին բարձրորակ կադրեր և տեխնոլոգիաներ ապահովող ծառայությունների կենտրոնի գործարկում | Հագուստի, կոշիկի և կաշվե իրերի ոլորտներում գործող կազմակերպությունների համար հասանելի կդառնան ծախսատար և նոր տեխնոլոգիաները | - | 2019 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ | ՄԱԱԶԿ տեխնիկական աջակցություն |
| 242 | Տեխնոլոգիական վեր-զինման ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառում | 242.1 «Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի | Արդյունաբերության ոլորտի տեխնոլոգիական վերազինման աջակցության ամրագրված հիմնական մեխանիզմներ, ուղղություններ և գործողություններ | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | 2019 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատակազմ | | | | |
| 243 | Մասնավոր հատվածում կորպորատիվ կառավար-ման սկզբունքների կիրառության խրախուսում և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցություն | 243.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, վերանայված կանոնակարգի ներդնման ուղեցույցի մշակման աշխատանքների համակարգում | Կորպորատիվ կառավարման կանոնակարգի կիրառման դաշտի ընդլայնում | - | 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 243.2 Կորպորատիվ կառավարման վերանայված կանոնակարգի հիման վրա օրենսդրական փոփոխությունների նախաձեռնում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնակարգի կիրառման դաշտի ընդլայնում | | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 244 | Կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով տնտեսական մրցակցության պաշտպանության ապահովում | 244.1 Սահմանափակ ռեսուրսներից օգտվելու նպատակով լիցենզիաների և թույլտվությունների տրամադրումը՝ բացառապես աճուրդի միջոցով իրականացնելու վերաբերյալ վերլուծության իրականացում և դրա արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Բոլոր տնտեսավարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական մրցակցային պայմանների ապահովում | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 245 | Ապրանքների և ծառա-յությունների շուկաներում նոր մասնակիցների մուտքի և առաջխաղացման խրախուսում՝ այդ թվում, պետության կողմից սահմանված ինստիտու-ցիոնալ կամ այլ տնտե-սական (լիցենզավորման | 245.1 «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի իրականացման իրավական կարգավորման ապահովում ժամանակակից շուկայական պայմաններին համապատասխան | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2020 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 245.2 Երրորդ երկրներից ՀՀ | Կնքված ազատ առևտրի մասին | - | 2020 | Լրացուցիչ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պահանջներ և այլն) արգելքների կամ սահմանափակումների թվաքանակի կրճատման միջոցով | ներմուծման և արտահանման քվոտաների համակարգի ընթացակարգերը սահմանող ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում և իրականացում | համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման քվոտավորման մեխանիզմի ներդնում | | թվականի մարտի 1-ին տասնօրյակ | ֆինանսավորում չի պահանջվում |
| 246 | «Գործարար միջավայրի վրա պետական քաղաքա-կանության ազդեցության գնահատում Համաշխար-հային բանկի Գործարարու-թյամբ զբաղվելը» զեկույցի միջոցով | 246.1 «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Մի շարք ոլորտներում պետական կարգավորումների և վարչարարության թափանցիկության բարձրացում, պար-զեցված և քիչ ծախսատար ընթացա-կարգերի ամրագրում՝ արդյունքում Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշում ապահովելով երկրի դիրքի բարելավում | - | Յուրաքանչ-յուր տարի՝ դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 247 | **Գործարար միջավայրի բարելավում** | 247.1 Գործարար միջավայրի բարելավման ռազմավարական փաստաթուղթը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված նախանշված քաղաքականության ուղղությունների առկայություն | ՀՀ պետական կառավարման մարմիններ ՀԾԿՀ (համաձայնությամբ) ԿԲ (համաձայնությամբ)<br><br>ՏՄՊՊՀ (համաձայնությամբ) | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում |
| 248 | Թիրախային շուկաներում հայաստանյան արտադ-րողների համար բարենպաստ առևտրային պայմանների պահպանում, նորերի հաստատում և դրանց կիրառության խորացում, մասնավորապես՝ ԵՄ, ԱՀԿ, ԵԱՏՄ, ինչպես նաև ԵԱՏՄ համագործակցության | 248.1 ԵԱՏՄ շրջանակներում Սինգապուրի և Սերբիայի հետ ազատ առևտրի համաձայնա-գրերի կնքման գործընթացի՝ Հայաստանի անունից համակարգում | Սինգապուրի և Սերբիայի շուկաներ արտոնյալ պայմաններով հասանելիության ընդլայնում | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 248.2 ԵԱՏՄ շրջանակներում Իսրայելի և Եգիպտոսի հետ ազատ առևտրի համաձայնա-գրերի կնքման գործընթացի՝ Հայաստանի անունից համակարգում | Իսրայելի և Եգիպտոսի շուկաներ արտոնյալ պայմաններով հասանելիության ընդլայնում | - | 2020 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | շրջանակում երրորդ երկրների հետ հարաբերություններում արտոնյալ պայմանների ստացում | 248.3 Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացա-կարգերի վերաբերյալ տեղե-կատվական ամբողջական հասանելիության ապահովում | Առնվազն 3 շուկաների մասով, ըստ առանձին ապրանքատեսակների, հայրենական արտահանողների տեղեկացվածության ապահովում | - | 2020 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 248.4 ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում | Խոչընդոտների և արգելքների գույքագրված ցանկի առկայություն, դրանց լուծման ուղղությամբ իրականացած քայլերի մշտադիտարկում՝ ներգրավելով ՀՀ առևտրական ներկայացուցիչներին | - | 2020 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 248.5 ԵԱՏՄ անդամակցու-թյամբ պայմանավորված ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի սահմանային դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության բանակցու-թյունների անցկացման ապահովում և ամփոփում | ԱՀԿ անդամ երկրների հետ երկկողմ բանակցությունների ավարտ, ՀՀ մաքսատուրքերի սահմանային դրույքաչափերի պարտավորությունների նոր ժամանակացանկի ամրագրում | - | 2023 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե բանակցային փուլերի անցկացման համար՝ 10 մլն ՀՀ դրամ |
| | | 248.6 ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) երկրի տարեկան զեկույցի պատրաստում, արտոնյալ առևտրային ռեժիմի և նրա ներքո գործող «Գրանցված արտահանողների համակարգի» (REX) կիրառման ապահովում | ԵՄ երկրներ արտահանման խթանում, արտահանման ծավալների աճ և ապրանքատեսակների դիվերսիֆիկացիա | - | 2019 թվականի հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 248.7 ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասում ամրագրված դրույթների իրականացման համակարգում | ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկե-րության կոմիտեի և համապատասխան ենթակոմիտեների նիստերի և դրանցում ձեռք բերված պայմանավոր-վածությունների իրականացման համակարգում, ՀՀ-ԵՄ առևտրատնտե-սական համագործակցության խորացում | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 249 | ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող աջակցության համակարգում | 249.1 ԵՄ 2019թ. տարեկան գործողությունների ծրագրի ներքո ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ քննարկումների և բանակցությունների համակարգում, դրանց ներքո իրականացվելիք ենթածրագրերի համակարգում, ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ապահովում | ԵՄ տարեկան գործողությունների ծրագրի ներքո ֆինանսավորման 3 համաձայնագրերի ստորագրում | - | 2020 թվականի ապրիլի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 249.2 ԵՄ բյուջետային աջակցության ընթացիկ ֆինանսավորման համաձայնագրերով նախատեսված տարեկան հատկացումների (տրանշների) շրջանակներում ամրագրված նախապայմանների իրականացման ընթացքի մշտադիտարկում, տարեկան առաջընթացի զեկույցների պատրաստման համակարգում | ԵՄ բյուջետային աջակցության 4 համաձայնագրերի ներքո բյուջետային հատկացումներ | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 249.3 ՀՀ-ում ԵՀՔ գործիքի ներքո (Թվինինգ, Թայեքս, Սոսյու, Սևծովյան ավազանի անդրսահմանային համագործակցություն, ՍԻԳՄԱ և այլն) տեխնիկական աջակցության ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման համակարգում | - 2 Թվինինգ ծրագրի մեկնարկ<br>- մինչև 5 Թայեքս ծրագիր,<br>- Սևծովյան ավազանի անդրսահմանային համագործակցություն ներքո մինչև 3 ծրագիր | - | 2020 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 250 | Արտահանմանն առնչվող մաքսային ընթացակարգերի և դրանցով պայմանավորված վարչարարության պարզեցում | 250.1 Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկի հաստատում, ընթացակարգերի վերանայում | Երկակի նշանակության ապրանքների արտահանման և տարանցիկ փոխադրման թույլտվությունների տրամադրման համար գործընթացի կանոնակարգում, միջազգային պահանջներին համապատասխանեցում, ռիսկերի նվազեցում, ընթացակարգերի պարզեցում | - | 2019 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 251 | Որակի ենթակառուցվածքի համակարգի արդյունավետության բարձրացում, համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձաքննությունների հասանելիության և մատչելիության բարձրացում, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիության ապահովում | 251.1 «Չափագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը և միջոցառումների ցանկը հաստատելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | - ՀՀ չափագիտության ոլորտը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու համար ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունների սահմանում,<br>- Ազգային գործող օրենսդրության և չափագիտության ոլորտի ԵԱՏՄ, միջազգային համանման օրենսդրության ուսումնասիրման արդյունքում համապատասխան թիրախների սահմանում,<br>- միջազգային լավագույն փորձին համահունչ ՉԱԻ կառուցվածքի, գործառույթների վերանայում | - | 2019 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 251.2 ՀՀ-ում գործող ոչ պարենային, ԵԱՏՄ գործող, տեխնիկական կանոնակարգերի վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի մշակմանը մասնակցություն | - Գործող 64 ազգային տեխնիկական կանոնակարգերի արդիականացում ԵՄ և ԵԱՏՄ հետ ներդաշնակեցման տեսանկյունից<br>- ԵԱՏՄ 47 գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայման, 19 նոր տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակմանը մասնակցություն տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդիականացում | - | Յուրաքանչյուր տարի՝ դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Ազգային ստանդարտների մշակման մասով՝ ՀՀ պետական բյուջեից ամենամյա |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ֆինանսավորում /14,123 հազար դրամ/ |
| | | 251.3 ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգերի մշակում և ներդնում | - Հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացում<br>- Հավատարմագրման գործընթացի մատչելիության, թափանցիկության ապահովում, արդյունավետության բարձրացում<br>- Համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների զարգացում<br>- Համապատասխանության գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացում, թղթավաճառության նվազեցում<br>- Հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների վերահսկելիության ապահովում | - | 2021 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող վարկային միջոցներ 95 000 հազար դրամ |
| | | 251.4 Հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքում տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF) | - ՀՀ համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիության ապահովում<br>- Առանց լրացուցիչ համապատաս-խանության գնահատման, առանց խոչընդոտների ԵՄ երկրներ արտադրանքի արտահանում<br>- համապատասխանության գնահատ-ման աշխատանքների իրականաց-ման համար պահանջվող ժամանակի և ֆինանսական ռեսուրսների կրճատում՝ կրճատելով տեղական արտադրողի, ներմուծողի ծախսերը, ստեղծելով բարենպաստ պայմաններ տեղական արտադրողի համար և բացառելով նույն արտադրանքի վերագնահատման (կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման) անհրաժեշտությունը: | - | 2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 251.5 Միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծման ապահովում | Կստեղծվեն զանգվածի և հարակից մեծությունների, ջերմային չափումների և հարակից մեծությունների, ուժի և հարակից մեծությունների տրամաչա-փարկման լաբորատորիաներ՝ ապահո-վելով ռազմական արդյունաբերության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտե-սության, հանքարդյունաբերության, շինարարության, մետաղամշակման, գործիքաշինության ոլորտներում, գազալցակայաններում, հավատար-մագրված փորձարկման լաբորատորիա-ներում ճշգրիտ և միջազգային մակարդակով հետևելի չափումներ: | - | 2023 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող վարկային միջոցներ 1400000 հազար դրամ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ 2187000 հազար դրամ |
| 252 | Արտաքին շուկաներում Հայաստանի՝ որպես բրենդ դիրքավորում, հաջողված ոլորտներում հայաստանյան արտահանող ապրանքների և ծառայությունների ճանաչելիության արմատավորում | 252.1 «Պետական աջակցություն՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքակա-նության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2019 թվականի ծրագրի» իրականացում | Արտահանմանն ուղղված պետական աջակցության տրամադրում, մասնավորապես ցուցահանդեսների կազմակերպման, տեղական արտադրանքի առաջմղման և ճանաչելիության բարձրացում, պոտենցիալ գնորդների և դիստրիբյուտորների ներգրավում | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 1072141.0 հազար դրամ |
| | | 252.2 ՀՀ առևտրական կցորդների/ ներկայացուցչությունների համակարգի բարեփոխումների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների ներկայացում | Գործող համակարգի արդյունավետության գնահատում, համակարգի նկատմամբ պետական քաղաքականության ճշգրտում | - | 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 253 | Օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացում | 253.1 Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն, վերանա-յում և զեկույցի պատրաստում ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) աջակցությամբ | Երկրի կարիքներին հարմարեցված ուսումնասիրություն (ՕՈՒՆ իրավական, կարգավորիչ և ինստիտուցիոնալ հիմքերի գնահատում), որում ներառված առաջարկությունները հստակ են և ուղղված կոնկրետ գործողությունների: | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 253.2 «Ներդրումային քաղաքականության | Բարեփոխումների միջոցառումների ծրագրի առկայություն, օտարերկրյա | - | 2020 թվականի | Ժնև պատվիրակու |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ուսումնասիրություն» զեկույցի արդյունքների ներկայացում Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի գլխամասում (Ժնև) կայանալիք նիստում | հանրությանը ՀՀ ներդրումային միջավայրի մասին տեղեկացում, ներդրումային համբավի բարձրացում | | փետրվարի 2-րդ տասնօրյակ | թյան գործուղման ծախսերի մասով՝ 5335 հազար դրամ |
| | | 253.3 Ամփոփված առաջարկությունների հիման վրա միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում | Ներդրումային քաղաքականության բարելավման ճանապարհային քարտեզ | - | 2020 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 254 | Պետություն-մասնավոր գործընկերության իրավական կարգավորում-ների և դրանց կիրառության ինստիտուցիոնալ կարողութ-յունների զարգացում | 254.1 «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ կանոնակարգերի և մեթոդաբանական ձեռնարկների մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | ՊՄԳ օրենսդրական հիմքի, նոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման հնարավորությունների ապահովում | - | 2019 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 254.2 ՊՄԳ ծրագրերի մշակման, ստուգման, կառուցվածքի սահմանման, իրականացման և մշտադիտարկման կարողությունների ձևավորում | Առավել արդյունավետ ՊՄԳ ծրագրերի մշակում ու խթանում և նոր ենթակառուցվածքների զարգացում | - | 2020 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 254.3 ՊՄԳ-ների վերաբերյալ տվյալների շտեմարանի ստեղծում | ՊՄԳ ծրագրերի մշտադիտարկման իրականացման բարելավում, նոր արդյունավետ ծրագրերի մշակման խթանում | - | 2020 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 254.4 Հանրային ներդրումների կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորում | Հանրային ներդրումների կառավարման ժամանակակից մեխանիզմների ներդնում | - | 2020 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 255 | Պոտենցիալ ներդրողների նախնական ուսումնասիրու-թյունների հետ կապված ծախսերի կրճատում և | 255.1 Հայաստանում ներդրումային որոշումների նախապատրաստման փուլում օտարերկրյա ներդրողների | Ներդրողների համար համապատասխան ծառայությունները ավելի քիչ ֆինանսական և ժամանակային ծախսերով ստանալու | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արդյունավետության բարձրացում, հետներդրումային սպասարկման ծառայությունների տրամադրում՝ տեղական միջավայրին հարմարվելու նպատակով | ժամանակային և ֆինանսական ծախսերը կրճատելու, ներդրումները և վերաներդրումները խթանելու համար «մեկ կանգառի» ծառայություններ մատուցող համակարգի ներդնում | հնարավորություն | | տասնօրյակ | |
| 256 | Մտավոր սեփականության պահպանության իրավական դաշտի կատարելագործում | 256.1 «Գյուտի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի գաղտնիության աստիճանի որոշման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | «Արտոնագրերի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված գյուտերին իրավական պահպանություն տրամադրելու ընթացակարգերի հստակեցում և արդյունավետության բարձրացում | - | 2020թ. հունիսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 256.2 «Արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված արդյունաբերական դիզայններին իրավական պահպանություն տրամադրելու ընթացակարգերի հստակեցում և արդյունավետության բարձրացում | - | 2020թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 256.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ ապրանքային նշաններին իրավական պահպանություն տրամադրելու ընթացակարգերի հստակեցում և արդյունավետության բարձրացում | - | 2019թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 256.4 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի 1501-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» նոր օրենքների ընդունման կապակցությամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների և առարկությունների քննարկման ընթացակարգերի կատարելագործում և հստակեցում, ինչպես նաև, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծում | - | 2020թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 256.5 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 506-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում | ««Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ պայմանավորված ստեղծագործությունների հրապարակային կատարման, հեռարձակման, ձայնագրությունների միջոցով վերարտադրության, վարձույթով տալու, դիզայնի ստեղծագործություններն արդյունաբերության մեջ վերարտադրելու համար հեղինակային վարձատրությանը վերաբերող ընթացակարգերի հստակեցում | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 256.6 Մարաքեշի «Կույրերի, տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողական այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների հասանելիությունը դյուրացնելու մասին» պայմանագրին միանալու նպատակով պայմանագրի նախագիծը և կից փաստաթղթերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Միջազգային չափանիշներին համապատասխան՝ հեղինակային իրավունքի որոշակի առանձնահատկությունների նախատեսում, որոնք հնարավորություն կտան տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողության ֆունկցիայի դժվարություններ ունեցող անձանց՝ ավելի լիարժեք ու արդյունավետ մասնակցելու և ներգրավվելու հասարակական և մշակութային կյանքին | - | 2019թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 256.7 Պեկինի «Տեսալսողական կատարումների մասին» պայմանագրին միանալու նպատակով պայմանագրի նախագիծը և կից փաստաթղթերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Անդամ պետությունը լիարժեք պահպանություն կապահովի մյուս անդամ պետության քաղաքացուն, դրանով իսկ երաշխավորելով տեղական արտադրողներին և կատարողներին օգտվելու իրենց գույքային իրավունքներից, երբ նրանց ֆիլմերը, հեռուստասերիալները ու այլ տեսալսողական ստեղծագործություն-ները կցուցադրվեն կամ այլ կերպ մատչելի կդառնան այլ երկրներում: | - | 2019թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 257 | Զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովմանն ուղղված քայլերի մշակում, զբոսաշրջային ենթակառուցվածքների և հարակից ծառայությունների բարելավում | 257.1 «Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» Համաշխարհային բանկի վարկային ծրագրի վերանայում | Ընտրված զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում, զբոսաշրջային վայրերի հասանելիության ապահովում | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Համաշխարհային բանկի վարկային միջոցներ |
| 258 | Զբոսաշրջության ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումներ | 258.1 «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | - Բարեփոխված իրավական համակարգ<br>- Զբոսաշրջության մասին օրենքի նախագիծ | - | 2020 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | | 258.2 Սահմանային էլեկտրո-նային կառավարման տեղեկա-տվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսա-շրջության ոլորտի վիճակագ-րության բարելավման աշխա-տանքների իրականացում | Ամբողջական և առավել ճշգրիտ վիճակագրական տվյալներ | - | 2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 258.3 Սատելիտային հաշիվ համակարգի ներդրման նպատակով Հայաստանի սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային երրորդ հետազոտության | Սատելիտային համակարգի ներդրման մեկնարկ | - | 2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | իրականացում | | | | |
| | | 258.4 Պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող ծառայությունների համակարգման էլեկտրոնային համակարգի ներդնում | Պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող ծառայությունների համակարգման մեխանիզմների բարելավում | - | 2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | 258.5 «Հայաստանի զբոսաշրջության ռազմավարությանը հավանութ-յուն տալու մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն և գործողությունների ծրագիր/ժամանակացույց | - | 2019 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 259 | Երկրի ճանաչողությանն ուղղված ծրագրի իրականացում | 259.1 Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի տարեկան ծրագրի իրականացում, այդ թվում՝<br>- Համաշխարհային զբոսաշրջային շուկաների վերլուծություն, թիրախային շուկաների ընտրություն, երկրի ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագիր<br>- Ցուցահանդեսների, շնորհանդեսների, ճանաչողական այցերի կազմակերպում,<br>- կայքի և սոցցանցերի միջոցով գովազդային արշավների իրականացում,<br>- գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում և տարածում | - Հայաստանի, որպես զբոսաշրջության համար գրավիչ երկրի նկարագրի կատարելագործում և համաշխարհային զբոսաշրջային շուկայում դիրքի բարելավում:<br>- Այլ զբոսաշրջային շուկաներում երկրի վարկանիշի բարձրացում<br>- Զբոսաշրջիկների թվի ավելացում | - | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե 286400 հազար դրամ<br><br>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 260 | Վերամշակող արդյունաբերության ոլորտում խնդիրների վերհանում և կարգավորումների | 260.1 Տնտեսության ճյուղերի էներգախնայողության հետազոտության իրականացում, էներգատար ճյուղերի վերհանում | Տնտեսության ճյուղերն ըստ էներգատարության (բարձր, միջին և ցածր) սահմանում, նորմատիվների և դրված ցուցանիշներին հասնելու համար համապատասխան մեխանիզմների | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | 2020 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերանայում | | մշակման համար հիմքեր | | | |
| 261 | Ձեռնարկատիրական գործունեության պայման-ների պարզեցմանը և ԵԱՏՄ շուկաներում առաջխաղացման հնարա-վորությունների ընդլայն-մանն ուղղված ԵԱՏՄ շուկաներում սահմանված տարիֆային և ոչ տարի-ֆային կարգավորումների զարգացման միջոցների ձեռնարկում | 261.1 Տարիֆային և ոչ տարիֆային կարգավորման մասով ՀՀ համար զգայուն ապրանքների ցանկի ձևավորում, դրանց ուղղությամբ մաքսատուրքի դրույքաչափերի և/կամ ոչ տարիֆային միջոցների կիրառման անհրաժեշտությամբ սահմանված ընթացակարգերի նախաձեռնում | Մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների և/կամ սպառողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում | | 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 262 | Արտահանման մեծ ներուժ ունեցող ոլորտներում ներդրումային ծրագրերի օժանդակություն՝ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային խթանիչ պայմաններ ստեղծելու ճանապարհով | 262.1 Ազատ տնտեսական գոտիների զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակում | Ազատ տնտեսական գոտիների արդյունավետության բարձրացման միջոցով արտահանման ներուժ ունեցող ոլորտներում ներդրումների ներգրավման և աշխատատեղերի ավելացման համար նպաստավոր պայմանների ստեղծման հայեցակարգային մոտեցումների առկայություն | | 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 263 | Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխում | 263.1 Պետական գույքի ոլորտի ռազմավարական փաստաթուղթը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Ռազմավարական փաստաթղթով նախատեսվում է փոփոխության ենթարկել ոչ միայն պետական գույքի կառավարման ընդհանուր քաղաքականությունը, այլ նաև վերանայել պետական գույքի հաշվառման, մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման, սպասարկման և ծառայությունների մատուցման, շարժական գույքի կենտրոնացված գնումների կազմակերպման, պետական գույքի պահպանման և օգտագործման վերահսկման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների | | 2019 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կառավարման բնագավառներում իրականացվող քաղաքականությունը: | | | |
| 264 | Պետական գույքի հաշվառման գործընթացի բարելավում և անշարժ գույքի մոնիտորինգի համակարգի ներդրում | 264.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի կառավարման ոլորտում միասնական քաղաքականություն իրականացնելու և մեկ մարմնի կողմից իրականացնելու համար տարբեր պետական մարմինների ենթակայության իրավունքի գրանցման վկայական ունեցող և չունեցող գույքի հանձնում Կոմիտեին | - | 2019 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: |
| | | 264.2 Սեփականության իրավունքի գրանցում չունեցող անշարժ գույքի ցանկի առանձնացման և Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում | Հանձնաժողովը կիրականացվի իրավունքի պետական գրանցում չունեցող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերա-բերյալ տեղեկատվության հստակեցում, ամփոփում, կկանոնակարգվի գրանցման խնդիրների իրականացումը, ինչպես նաև ավարտին կհասցվի գույքի նկատմամբ պետական սեփականության իրավունքի ճանաչման գործընթացը | - | 2020 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: |
| | | 264.3 Շահագրգիռ պետական մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից Կոմիտեին պետական սեփականության իրավունքի վկայական ունեցող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների ավարտում | Պետական գույքի միասնական կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, հստակ ամրագրված ժամանակահատվածում, Կոմիտեի տնօրինությանը հանձնելու աշխատանքների կատարում: | - | 2021 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: |
| | | 264.4 «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու և գույքի վիճակի վերաբերյալ առաջարկություններ ներկայաց- | Լիազոր մարմնին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ ֆինանսատնտեսական մոնիտորինգի իրականացում: Պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակի բացահայտում, որի շնորհիվ կբարձրացվի պետական | - | 2020 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | նելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | գույքի կառավարման արդյունավետությունը: | | | |
| | | 264.5 Գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ հսկողության գործուն համակարգի մշակում | Գործուն հսկողություն իրականացնելու շնորհիվ պետական գույքի նպատակային օգտագործման ապահովում և կառավարման արդյունավետության բարձրացում | - | 2020 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում |
